2009, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (296)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*18 հունիսի*

### Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ-Ասադին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Ողջունելով մեծարգո հյուրի այցը համայն հայության սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնեց, որ բազմադարյան հարաբերությունները երկու երկրների միջեւ անխաթար կերպով, բարեկամական նույն ջերմ զգացումներով շարունակվում են եւ առավել ամրապնդվում նոր համագործակցությամբ ու իրագործումներով: Նորին Սրբությունը նախագահի այցը Հայաստան նոր խթան նկատեց այդ համագործակցության առավել զորացման համար:

Հայոց Հայրապետը վերհիշեց իր այցելությունը Սիրիա՝ Հալեպ եւ Դեր Զոր, եւ հաստատեց Սիրիայի ժողովրդի եւ իշխանությունների հոգատար վերաբերմունքը սիրիաբնակ հայորդիների նկատմամբ՝ հավելելով, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա Սիրիայի եղբայր ժողովրդի աջակցությունը՝ մանավանդ Մեծ եղեռնից մազապուրծ եղած հազարավոր հայերի հանդեպ: Հայոց Հայրապետը նաեւ խոսեց միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների մասին՝ աշխարհի առաջ ծառացած հիմնախնդիրների լուծման գործում կարեւոր նկատելով հոգեւոր առաջնորդների համերաշխ համագործակցությունը՝ ի սեր ժողովուրդների բարօրության: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Զաքքա Ա Պատրիարքի եւ Սիրայի գլխավոր Մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի այցերին Մայր Աթոռ:

ՍԱՀ նախագահն իր խոսքում անդրադարձավ Սիրիայի ժողովուրդների եւ կրոնների բազմազանությանը եւ հայերի կարեւոր ներդրմանը երկրի կյանքում: Նախագահը հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ պաշտոնական այց կատարել Սիրիայի Հանրապետություն:

Ի գնահատություն հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահի, պետության եւ ժողովրդի հոգատար ու ազնիվ վերաբերմունքի, ինչպես նաեւ ի խնդիր խաղաղության եւ ժողովուրդների բարեկամության կատարած իր աշխատանքի՝ Գարեգին Բ Հայրապետը նախագահ Բաշար Ալ-Ասադին հանձնեց Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան:

«...Ձեր բարեհիշատակ նախորդները հատուկ հոգածությամբ Սիրիայում ազատ ապրելու, եկեղեցի, դպրոց ու ազգային հաստատություններ հիմնելու իրավունք շնորհեցին տարագիր մեր հայրերին՝ առհավետ ամրագրելով մեր երկու ժողովուրդների եղբայրությունը: Գոհունակություն է Հայրապետիս համար, որ սիրիաբնակ մեր հավատավոր զավակները երկրի հպարտ ու արժանավոր քաղաքացիներն են եւ ազնիվ աշխատանքով ու առաքինի գործերով բազմարդյուն մասնակցություն են բերում Սիրիայի հասարակական կյանքի առաջընթացին»,- ասվում է հայրապետական սրբատառ կոնդակում:

Հանդիպմանը ներկա էին Արարատ եպս Գալթագճյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Սահակ եպս Մաշալյանը, ինչպես նաեւ Սիրիայից բարերար հայորդիներ տիարք Գառնիկ Յակուբյանը, թեմական խորհրդի ատենապետ Թագվոր Բոյաջյանը, Վազգեն Յակուբյանը եւ Գաբրիել Ջամբարջին:

*19 հունիսի*

### Կալինինգրադի մարզի նահանգապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության Կալինինգրադի մարզի նահանգապետ Գեորգի Բոոսի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց առավել ամրապնդվող եւ զարգացող երկկողմ հարաբերությունների, համագործակցության եւ երկու ժողովուրդների միջեւ բարի ավանդույթների պահպաման ու զորացման առիթով՝ կարեւորելով տարբեր ոլորտների գործիչների փոխայցելությունները: Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց նահանգապետին՝ հայ համայնքի նկատմամբ մարզային իշխանությունների ուշադիր եւ հոգատար վերաբերմունքի համար:

Այնուհետեւ պրն Բոոսը, ուրախություն հայտնելով հերթական հանդիպման համար, ներկայացրեց այցի մանրամասները եւ արձանագրված արդյունքները, ինչպես նաեւ անդրադարձավ Կալինինգրադի մարզում հայ ժողովրդի զավակների աշխույժ համայնքային կյանքին եւ կարեւոր ներդրմանը՝ մարզի կյանքի տարբեր ոլորտներում:



## Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու ուխտի օրը



Հունիսի 27-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետի նշխարները գտնելու տոնը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ տարիներ առաջ տոնը հռչակվել էր Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ուխտի օր:

Այս առիթով Մայր եկեղեցում ժամը 11.00-ին մատուցվեց ուխտի սբ պատարագ: Պատարագիչն էր Կոմիտաս վրդ. Հովնանյանը: Պատարագի ավարտից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ տոնական համերգ՝ մասնակցությամբ հայորդյաց տների սաների եւ «Գրիգոր Լուսավորիչ» մանկական երգչախմբի:

Վերջում կատարվեց մատաղի օրհնություն եւ հյուրասիրություն: Ապա Լուսավորչի Կանթեղի լույսից բաժանվեց հավատացյալներին:

## Բնապահպանական նոր ծրագիր Սեւանի Վազգենյան դպրանոցում

Հունիսի 24-ին Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բացվեց արեւային ջրատաքացուցիչներով ջրամատակարարման համակարգը: Բացման արարողությանը ներկա էին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանը, ՀՀ բնապահպանության փոխնախարար Սիմոն Պապյանը, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրից ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչի տեղակալ Դիրկ Բոբերգը, ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը, Մայր Աթոռի միաբաններ եւ ուսանողներ:

Դպրանոցի տարածքում տեղադրված 60 ք.մ. ընդհանուր մակերեսով արեւային ջրատաքացուցիչ կոլեկտորների համակարգի միջոցով ապահովվեց Սեւանի Վազգենյան դպրանոցի տաք ջրամատակարարումը: Համակարգի գործարկումը հնարավորություն կընձեռի տարեկան ստանալ 1500 խ.մ., մոտավորապես 45C ջերմաստիճանի ջուր:

Դեռեւս 2008 թ. ՀՀ բնապահպանության նախարարության եւ ՄԱԶԾ/ԳԷՖ-ի կողմից իրականացվող «Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի եւ Կլոր սեղան հիմնադրամի միջեւ ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում իրականացվեցին համակարգի նախագծման եւ տնտեսական գնահատման աշխատանքները: Համակարգի տեղադրման աշխատանքները կատարել է «Սոլարէն» մասնագիտացված ընկերությունը:

Արարողությունը բացվեց դպրանոցի տեսուչ Գեւորգ աբեղա Սարոյանի ողջույնի խոսքով, ապա այս համակարգի կարեւորությանն անդրադարձան ՀՀ բնապահպանության փոխնախարարը, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալը եւ Կլոր սեղան հիմնադրամի տնօրենը:

Վերջում ներկաներին իր օրհնության խոսքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր մասնավոր գնահատանքը հայտնեց բոլոր այն անձանց, ովքեր նպաստել են կարեւոր այս ծրագրի իրականացմանը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ողջունեց «Կանաչ աստվածաբանություն» ծրագիրը, որը մեծ նշանակություն ունի ապագա հոգեւոր հովիվների կրթության համար, քանի որ սովորեցնում է մարդուն հոգատար լինել Աստծո արարչագործության եւ ի մասնավորի բնության հանդեպ: Նորին Սրբությունը նկատեց, որ արեւային, էկոլոգիապես մաքուր էներգիայի օգտագործման այս ծրագիրը խանդավառող օրինակ կարող է ծառայել այլ կառույցների եւ կազմակերպությունների համար:

Վերջին տարիներին Վազգենյան դպրանոցը, աջակցությամբ Կլոր սեղան հիմնադրամի, լրջորեն զբաղվում է բնապահպանական խնդիրներով: 2006 թ. կազմակերպվեցին կլիմայի փոփոխության եւ բնապահպանության արդի խնդիրներին նվիրված ամառային դասընթացներ: Այնուհետեւ ԵՊՀ եւ Վազգենյան դպրանոցի դասախոսները մշակեցին «Կանաչ աստվածաբանության» հատուկ դասախոսությունների շարք եւ հրատարակեցին դասագիրք: Դպրանոցում պարբերաբար դասախոսում են նաեւ Հայաստանի եւ արտերկրի ճանաչված բնապահպաններ:

# «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան Ռուբեն Միրզախանյանին



Հունիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դեկան Ռուբեն Միրզախանյանին Հայոց եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանի հանձնման արարողությունը:

Մեծարյալի կյանքին ու գործունեությանն անդրադարձավ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը: Տիար Ավետիքյանը նաեւ շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ իմաստուն տնօրինության համար, որով մեկ անգամ եւս փաստվում են Հայոց Հայրապետի եւ Մայր Աթոռի ուշադրությունն ու հոգածությունը՝ հանդեպ իրենց արժանի եւ հավատավոր զավակները:

Այնուհետեւ բերվեց սրբատառ կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի լուսարարապետ Արարատ եպս Գալթագճյանը:

*«Անձնապես ճանաչում ենք Ձեզ եւ ծանոթ ենք Ձեր ազգասեր, հավատավոր ու եկեղեցասեր ոգուն եւ լուսավորչապսակ Սուրբ Էջմիածնի հանդեպ Ձեր որդիական անկեղծ զգացումներին: Տիրոջ օրհնությամբ Ձեր կյանքի տարիները լի են ազգանվեր սպասավորության գովարժան արդյունքներով ու հարուստ վաստակով:*

*Տասնամյակներ շարունակ Դուք մանկավարժական աստվածահաճո առաքելություն եք իրականացնում Երեւանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ Ձեր կարողություններն ի սպաս դնելով կրթօջախի երախտարժան գործունեությանը: Իբրեւ դասախոս եւ դեկան բուհի Կուլտուրայի ֆակուլտետի՝ Դուք հոգածու նվիրումով շնորհաշատ հայորդիների հոգիներում խնամում եւ եւս առավել զորացնում եք սերը հանդեպ հայ եւ համաշխարհային մշակույթը, հոգեւոր ու ազգային մեր արժեքները, որպեսզի նրանք ապագայում շարունակեն հարուստ ու հինավուրց մեր մշակույթի լավագույն ավանդները եւ արժանավոր գործերով փառք հավելեն մեր ժողովրդի պատվավոր անվանը»*,- ասվում է հայրապետական կոնդակում:

Նորին Սրբությունն իր կոնդակում անդրադառնում է նաեւ մեծարյալի հասարակական եւ մշակութային գործունեությանը, որը միտված է աստվածասեր մեր ժողովրդի բարօրությանը, Հայրենիքի եւ Սփյուռքի զորացմանը, ազգային մեր իղձերի իրականացմանն ու մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը:

Պարգեւաբաշխումից հետո իր սրտի խոսքն ասաց տիար Ռուբեն Միրզախանյանը: Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին մեծ պատվի արժանացնելու համար՝ նա անդրադարձավ Գարեգին Բ Վեհափառի 10-ամյա գահակալության շրջանում Հայ Եկեղեցու վերազարթոնքին:

«Մի քանի ամիս անց ազգովի պիտի տոնախմբենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 10-ամյակը. տարիներ, որոնք շատ որոշակի իմաստավորում ունեն մեր ժողովրդի կյանքում, որոնք աննախադեպ են եկեղեցաշինության տեսանկյունից: Եկեղեցաշինություն ասելով՝ մենք չենք ենթադրում միայն նոր եկեղեցիների կառուցում, վերհառնում թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում, այլ որ այս տարիների ընթացքում նոր որակական աճ եւ բովանդակություն ունեցան հոգեւոր դասի նախապատրաստումը, նոր կրթօջախների ստեղծումը: Եկեղեցաշինություն ասելով՝ մենք ենթադրում ենք այն ազգանվեր, ամենօրյա ազգօգուտ գործունեությունը, որը ծավալում է Հայ Առաքելական Եկեղեցին Հայրենիքում եւ Սփյուռքում՝ գլխավորությամբ, անմիջական ղեկավարությամբ, հետեւողական գործունեությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի»,- նշեց տիար Միրզախանյանը:

Վերջում ներկաներին իր հայրական օրհնությունը բաշխեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ անդրադառնալով մեծարյալի մարդկային հատկություններին, Մայր Եկեղեցուն եւ Հայրենիքին նրա անսահման նվիրվածությանը: Նորին Սրբությունը մաղթեց, որ տեր եւ տիկին Միրզախանյաններն ապրեն երջանիկ կյանքով եւ շարունակեն անձնվեր ծառայել՝ ի սեր մեր ժողովրդի եւ Եկեղեցու: Պարգեւաբաշխության ընթացքում ելույթ ունեցավ «Վերածնունդ» կամերային նվագախումբը՝ ղեկավարությամբ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Ռուբեն Ասատրյանի: Ելույթ ունեցան նաեւ ՀՀ վաստակավոր արտիստուհի Անահիտ Մխիթարյանը եւ ՀՀ ժողովրդական արտիստ, դուդուկահար Ջիվան Գասպարյանը:

Հանդիսությանը մասնակցում էին ՀՀ վարչապետ տիար Տիգրան Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԱԺ պատգամավորներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, գիտության, մշակույթի եւ արվեստի մշակներ:

# «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան Սուրեն Սահակյանին



Հունիսի 26-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով պարգեւատրեց պրն Սուրեն Սահակյանին՝ ի գնահատություն Հայոց Եկեղեցուն բերած ազնիվ ծառայությունների:

Մեծարյալի վաստակը ներկայացրեց Պարույր քհն. Ավետիսյանը: Ապա հանդիսավոր կերպով ներս բերվեց հայրապետական սրբատառ կոնդակը, որն ընթերցեց Արարատ եպս Գալթագճյանը:

*«Ճանաչում ենք Ձեզ անձնապես եւ ծանոթ ենք մեր երկրում շինարարության ասպարեզի զարգացմանը միտված Ձեր բեղմնավոր, բծախնդիր ու բարեխիղճ գործունեությանը: Այսօր առիթ ունենք անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին... Գոհունակություն է Մեզ համար, որ մեր ժողովրդի զավակները աջակից են մեր Սուրբ Եկեղեցուն՝ շարունակելու բազմադարյա առաքելությունը հանուն հայ ինքնության անխաթար պահպանման, հոգեւոր ու ազգային մեր կյանքի պայծառության, նախնյաց ավանդների հանդեպ հավատարմության զորացման»*, - մասնավորապես ասվում է հայրապետական կոնդակում:

Այնուհետեւ Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով եւ մաղթեց, որ Տերը շնորհի պրն Սահակյանին եւ նրա ընտանիքի անդամներին կյանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ նրա բոլոր բարի ու առաքինի ձեռնարկումները պսակի հարանոր հաջողություններով:

# ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ



Հունիսի 15-ին՝ մեկամսյա արձակուրդից հետո, կրկին վերաբացվեցին Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի դռները՝ վերսկսելու նոր ուսումնական տարին: Լինելով Սփյուռքի հնագույն կրթօջախներից մեկը եւ գտնվելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու եւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրության ներքո ՝ այս ճեմարանը շարունակում է կրթական գործունեություն ծավալել հեռավոր Հնդկաստանում, որի դռները միշտ բաց են ուսումնատենչ հայ աշակերտների համար:

Այժմ ճեմարանում ուսանում են հնդկահայ, ինչպես նաեւ Հայաստանից, Պարսկաստանից եւ Իրաքից ժամանած հայորդիներ:

Այս տարի եւս Մարդասիրական ճեմարանը համալրվեց Իրաքից ժամանած մի խումբ հայ պատանիներով, ինչպես նաեւ Հայաստանից հրավիրված ուսուցչուհիներով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ (ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ)

**հայտարարում է 2009-2010 ուս. տարվա**

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Գեւորգյան հոգեւոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան) կարող են ընդունվել ՀՀ եւ այլ երկրների մինչեւ 21 տարեկան քաղաքացիներ, որոնք ունեն միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն եւ զավակն են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ որոնք հաջողությամբ կհանձնեն ընդունելության քննություններ հետեւյալ առարկաներից.

1. հայոց լեզու (գրավոր, հարցարանով),
2. հայ գրականություն (բանավոր),
3. հայոց պատմություն (բանավոր),
4. երաժշտություն (ձայնային տվյալների ստուգում),
5. անգլերեն (հարցազրույց):

Նախքան քննությունները դիմորդները ճեմարանի տեսչության հետ ճանաչողական բնույթի զրույց կունենան հետեւյալ նյութերի շուրջ.

1. Սուրբ Գրքի իմացություն,
2. եկեղեցական փորձառություն,
3. ընդհանուր գիտելիքներ Հայ Եկեղեցու պատմությունից,
4. ինքնաարտահայտվելու կարողություն:

Դիմումները տրվում են Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչի անունով՝ ներկայացնելով ներքոհիշյալ փաստաթղթերը.

1. դիմում,
2. միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթության վկայական,
3. բնութագիր (դպրոցի տնօրենից),
4. զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը),
5. բժշկական վավերացված տեղեկանք (086 ձեւ),
6. 2 լուսանկար (3X4),
7. անձնագրի պատճեն,
8. ինքնակենսագրություն,
9. երաշխավորագիր թեմի առաջնորդից կամ շրջանի հոգեւոր հովվից,
10. տեղեկանք բնակավայրից,
11. մկրտության վկայական:

Փաստաթղթերն անձամբ ներկայացնել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի քարտուղարություն:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակի օրերից, հուլիսի 7-ից մինչեւ օգոստոսի 22-ը՝ ժամը 10:00-16:00 (շաբաթ օրը՝ մինչեւ ժամը 13:00):

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեւորգյան հոգեւոր ճեմարան:
Հեռախոս՝ (010) 517-185, (010) 517-180:

*Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչություն*

# Ի Տեր հանգյավ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը







Հունիսի 27-ի առավոտյան «Նաիրի» բժշկական կենտրոնում կյանքի 72-րդ տարում վախճանվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբան, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրյալ եւ բազմավաստակ սպասավոր Ներսես արք. Պոզապալյանը:

Հունիսի 29-ին Ս. Գայանե վանքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ եւ թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների, տարբեր թեմերից ժամանած եկեղեցականների, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, Հայաստանում պապական նվիրակ արքեպիսկոպոս Կլաուդիո Գուջերոտիի, հանգուցյալ սրբազանի հարազատների ու բարեկամների մասնակցությամբ տեղի ունեցավ սրբազան հոր հոգեհանգստյան արարողությունը, որին ներկա էր նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Արարողությունից հետո ներկաներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

*«Մեծարգո Նախագահ,*

*Հոգեւոր հայրեր եւ սիրելի բարեպաշտ ժողովուրդ,*

*Տխրությունն է այս պահին համակել մեր հոգիները: Վշտալի զգացումներով եւ կորստի ցավը մեր սրտերում՝ հրաժեշտ ենք տալիս մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վաստակաշատ եւ նվիրյալ սպասավոր Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանին: Ուղեկցում ենք նրան դեպի հավերժական կյանքի ճանապարհ, դեպի վերջին հանգրվանը՝ Աստծո ողորմած հայացքի ներքո:*

*«Ոչ է մարդ իշխան հոգւոյ ... եւ ոչ գոյ իշխանութիւն նորա յաւուր մահուան» (Ժող. 8.8),- ասում է Սուրբ Գիրքը: Արդարեւ, մարդը իշխանություն չունի իր մահվան օրվա հանդեպ: Տերն է կանչում մարդուն երկրավոր կյանքից հավիտենական կյանքի: Մենք հավատում ենք, որ ի Քրիստոս ննջեցյալ հոգիներին պիտի հնչի առաքյալի կողմից վկայակոչված խոսքը. «Արի՛ որ ննջեսդ, եւ կանգնեա՛ց ի մեռելոց, եւ լուսաւորեսցէ զքեզ Քրիստոս» (Եփ. 5.14): Մխիթարական այս գիտակցությամբ ենք հրաժեշտ տալիս այսօր Տիրոջ արժանավոր ծառայի՝ Ներսես Սրբազանին:*

*Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանը մեր եկեղեցու երեց եւ բանիմաց հոգեւորականներից էր: Մենք ճանաչել ենք Սրբազանին դեռեւս Մեր ուսանողական տարիներից: Նա բարեպաշտ ծնողների զավակ էր, ովքեր տարագրված Կիլիկիայից, կարճ ժամանակ ապաստանելով Բեյրութում՝ ի վերջո բնակություն հաստատեցին Հայաստանում: Աստվածսիրության ու հայրենասիրության հունդերը, որ Սրբազանի հոգում սերմանել էին իր հավատավոր ծնողները, ծլարձակեցին, եւ դեռեւս երիտասարդության տարիներին նա ուխտեց որպես կուսակրոն հոգեւորական իր ծառայությունը բերել եկեղեցուն եւ ժողովրդին: Սովորելով Անթիլիասում, ապա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում՝ հոգելույս Սրբազանը իր ուսումնատենչ հոգում ամբարեց գիտելյաց պաշարներ եւ ծաղկեցրեց իր ծառայագործությունը՝ բարեբեր պտուղներ բերելով Հայ Եկեղեցու փրկչական ու ազգապահպան առաքելությանը: Նա ապրեց մեր եկեղեցու համար դժվարին ժամանակաշրջանում, երբ Հայաստանում եկեղեցին ու եկեղեցականները գործելու ազատություն չունեին, եւ Սուրբ Էջմիածինը խորհրդային տարիներին չէր կարողանում ի գործ դնել իր ողջ հնարավորությունները՝ Հայրենի երկրում եւ աշխարհով մեկ սփռված մեր ժողովրդի կյանքում իրականացնելու իր առաքելությունը: Այս պայմաններում բարեհիշատակ Սրբազանը տասնամյակներ շարունակ իր սպասավորությունը բերեց Հայրենիքում եւ Սփյուռքում, որպեսզի հայորդիների սրտերում մշտավառ մնան քրիստոնեական հավատքը, եկեղեցանվիրումն ու ազգասիրությունը: Վազգեն Ա Հայրապետի գահակալության տարիներից Ներսես Սրբազանը եռանդուն մասնակցություն է ունեցել Հայոց Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցա-կազմակերպչական ու կրթա-դաստիարակչական գործունեությանը՝ լինելով Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ, Մայր Աթոռի դիվանապետ, Հոգեւոր Ճեմարանի տեսուչ, Շվեյցարիայի հայոց հոգեւոր հովիվ, Անգլիո Հայոց թեմի առաջնորդ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի անդամ: Հոգելույս Սրբազանը իր զբաղեցրած պատասխանատու պաշտոններում եւ հանձնառություններում միշտ աշխատել եւ գործել է աննվազ ձգտումով՝ օգտակարություն ու արդյունավորություն բերելու հայ ժողովրդի կյանքում մեր Սուրբ Եկեղեցու, Սուրբ Էջմիածնի առաքելությանը, ջանքեր ներդնելու՝ Մայր Եկեղեցու առավել զորացման, շինության ու պայծառության համար:*

*Ի Տեր հանգուցյալ Ներսես Սրբազանի հոգեւոր վաստակը արգասավորված է նաեւ իր գրական ստեղծագործություններով, որոնցում արտահայտված են Սրբազանի սերը առ Աստված եւ առ Հայրենին, նվիրումն ու հավատարմությունը՝ հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին, եւ որոնք զորացնում են ընթերցողների ձգտումը առ բարին, ազնիվը եւ գեղեցիկը:*

*Մխիթարությամբ ենք հիշում, որ Հայրապետական սրբատառ Կոնդակով Ներսես Սրբազանին շնորհել ենք մեր Սուրբ Եկեղեցու պատվո բարձրագույն պարգեւը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, եկեղեցաշինության առաքելության մեջ բերած ներդրումի՝ իր սիրելի ծնողների հիշատակին Թեղենիքի Սրբոց Նախատակաց եկեղեցու կառուցման համար, որի բակում եւ ամփոփվելու է Սրբազանի աճյունը:*

*Այս տխուր առիթով Մեր գնահատանքն ու շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ Տիար Սերժ Սարգսյան, Ձեր ներկայության, լուսահոգի Սրբազանի հանդեպ հարգանքի, նրա երկարամյա, ազգանվեր ծառայության արժեւորման եւ Մեզ բերած սրտակցության համար:*

*Եղբայրական Մեր սերն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանին, ովքեր կորստի այս դժվարին պահին իրենց մխիթարիչ ու սրտակից խոսքով եւ աղոթքով Մեզ եւ Մայր Աթոռիս միաբանության հետ են:*

*Հայրապետական օրհնություն ու գնահատանք ենք բերում նաեւ Հայաստանում պապական նվիրակ Արքեպիսկոպոս Կլաուդիո Գուջերոտիին եւ բոլոր այն անձանց, ովքեր այսօր աղոթակից են եւ իրենց վշտակցությունն են բերում Մեզ, մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին եւ Սրբազանի հարազատներին:*

*Խորազգաց սրտով Մեր բարձր գնահատանքն ու շնորհակալությունն ենք հայտնում «Նաիրի» բժշկական կենտրոնի տնօրինությանը, բժշկական անձնակազմին՝ Սրբազան Հոր հանդեպ իրենց հոգատար վերաբերմունքի եւ ցուցաբերած խնամքի համար:*

*«Ուր Ե՛ս եմ, անդ եւ պաշտօնեա՛յն Իմ եղիցի» (Յովհ. 12.26),- ասում է Քրիստոս մեր Տերը: Այս հավատով ի խորոց սրտի աղոթում ենք առ Ամենողորմ Տերը, որ երկնային բարձունքներում լույսերի մեջ պարուրի հոգին վաստակաշատ Իր սպասավորի՝ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանի, եւ Սուրբ Հոգու մխիթարությունը շնորհի Սրբազանի սգակիր քույրերին, մերձավորներին եւ բոլոր հարազատներին: Սիրելի Սրբազան, «ծառա՛յ բարի՛ եւ հաւատարիմ, .... մո՛ւտ յուրախութիւն Տեառն քո» (հմմտ. Մատթ. 25.21):*

*Աղոթք եւ օրհնություն Ներսես Սրբազանի բարի եւ լույս հիշատակին»:*

Վերջում Նորին Սրբությունը եւ ՀՀ նախագահը մոտեցան եւ իրենց վշտակցությունը հայտնեցին սրբազանի հարազատներին:

Հունիսի 30-ին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Թեղենիքի՝ սրբազանի կողմից կառուցված Սրբոց Նահատակաց եկեղեցում Արարատ եպս Գալթագճյանը մատուցեց պատարագ, եւ ապա կատարվեց վերջին օծման կարգը: Վեհափառ Հայրապետը մյուռոնով օծեց Ներսես սրբազանի ճակատն ու աջ ձեռքը: Այնուհետեւ Նորին Սրբությունն ու միաբանները մոտեցան եւ սրբազանից ստացան «վերջին ողջույնը»:

Դամբանականով հանդես եկավ Արսեն արք. Բերբերյանը: Նա անդրադարձավ Ներսես սրբազանի կյանքին եւ գործունեությանը՝ շեշտելով նրա անձնվեր եւ անսակարկ ծառայությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Արսեն սրբազանը հոգեւորականների եւ բարեպաշտ զավակների անունից իր ցավակցությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին եւ Ներսես սրբազանի հարազատներին՝ ընդգծելով, որ նրա գործերը եւ Սրբոց Նահատակաց եկեղեցին մշտապես պիտի հիշեցնեն մեզ հանգուցյալ սրբազանի մասին:

Ապա կատարվեց թաղման կարգը, որի ընթացքում Արցախի հայոց թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանն ընթերցեց Ներսես սրբազանի վախճանման առիթով Ամենայն Հայոց Հայրապետին ուղղված՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի ցավակցական գրերը: Այս օրերին ցավակցագրեր էին ստացվել նաեւ Երուսաղեմի եւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքներից, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանից, Հայ Առաքելական եկեղեցու թեմակալ առաջնորդներից:

Շարականների եւ սաղմոսների երգեցողության ներքո Ներսես արք. Պոզապալյանի աճյունն ամփոփվեց Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում:

*Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Գնաց ու միացավ անհունին

Գործունեության հարուստ ճանապարհ անցած Ներսես սրբազանի երկրային կյանքը եղավ Հայ Առաքելական Եկեղեցուն ու ազգին նվիրումով ծառայելու առաքելություն, որի աղբյուրն իր նախնյաց հավատն էր: Սրբազանը մեր ժողովրդին ծանոթ էր ոչ միայն որպես հոգեւորական, այլեւ որպես բանաստեղծ՝ Ներսես Վանական մականունով:

Նրա բանաստեղծական հերոսը թեպետ հոգեւորական է եւ մեծամասամբ ներբողում է Արարչին ու արարչականը, սակայն աշխարհի, գոյի բանաստեղծացման ակունքներում մշտապես փայփայում է մարդկային կյանքի՝ հազարամյակներով մշակված փիլիսոփայությունը, փորձում տեսնել ժամանակների կապը, զգալ իր ժողովրդի կյանքի ռիթմը, հեռավոր ու «հնօրյա պատմությունից» վերաշարադրել իր նորօրյա երգը՝ «նոր տեսիլքներով ու ձգտումներով՝ իբրեւ օթեւան գալիք մի կյանքի»: Նրա պոեզիայի նպատակն Աստծո արարչական ոգու աներկբայության բացահայտումն է ու Նրա գոյության ըմբռնման ազդեցությունը մարդկային մտքի ու դրանից բխող դրսեւորումների վրա: Նա ցավով ու կարեկցանքով է խոսում մարդ արարածի հոգեկան անմխիթար վիճակի, նրա սին տվայտանքների ու նկրտումների մասին:

Ներսես սրբազանի կյանքը, խոսքն ու պոեզիան խորագնա արմատներ ունեն: Հայրենիքից հեռու ծնված ու ողջ պատանեկության շրջանն օտար միջավայրում անցկացրած բանաստեղծ հոգեւորականի համար Հայաստան աշխարհը միայն գիտակցված հայրենիք չէր: Դա այն հողակտորն էր, ուր ամփոփված էին իր եսի, իր ինքնության հազարամյա գրավականը, իր պատմությունն ու մշակույթը, դարերով ավանդված այն թանկ ու անփոխարինելի ժառանգությունը, որն ուրիշ ոչ մի տեղ չէր կարող ունենալ, ուրիշ ոչ մի հողում, ոչ մի ոգում չէր կարող ծլարձակել: Դա այն հողակտորն էր նաեւ, որում այսօր վերջնական հանգրվան գտավ խլյակ դարձած իր մարմինը, աշխարհային ցավ ու խինդի միջով անցած իր սիրտը՝ իր իսկ կառուցած եկեղեցու կողքին, եկեղեցուց հնչող աղոթքի ու շարականի, սաղմոսի եւ Մեծ լռության հնչյունների տակ:

*Վանքի կշտին՝ մի տաք*
*անկյուն*
*Թող քաշվեի ու քնեի...*

Թող Աստված խաղաղ քուն պարգեւի Ձեզ, սրբազան հա՛յր:

*«Քրիստոնյա Հայաստան»*



## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Ժ ՋԱԼԱԼԲԵԳՅԱՆՑ (1443-1465)

*Սկիզբը՝ թիվ 11*

Հայաստանից դեպի արեւմուտք գոյություն ուներ երեք պետություն, որոնք տիրում էին մեր հայրենիքի արեւմտյան որոշ երկրամասերին: Դրանք էին Եգիպտոսը, Կարամանը եւ Օսմանյան պետությունը: Եգիպտացիները գրավել էին Կիլիկիան, եւ նրանց տիրապետության տակ էր հայտնվել հայոց նշանավոր Սիս քաղաքը: Կարամանցիք գրավել էին Փոքր Հայքը եւ տարածվել Բարձր Հայքի ու Պոնտոսի ուղղությամբ: Օսմանցիները դեռ Հայաստան մուտք չէին գործել, իսկ այդ շրջանում՝ 1451-ին, նրանց սուլթանն էր Մեհմեդ Բ-ն: Բյուզանդական կայսրությունն ամփոփվել էր Կոստանդնուպոլսի շրջակայքում: Հովհաննես Է Պալեոլոգի փորձերը Ֆլորենցիայի ժողովով, անգամ դավանաբանական զիջումների ճանապարհով, օգնություն ստանալ Արեւմուտքից, ավարտվել էին անհաջողությամբ: Կորցնելով ամեն հույս՝ նրանք մի կողմից ամրացնում էին Կոստանդնուպոլսի պարիսպները, իսկ մյուս կողմից հուսահատ քայլեր էին կատարում՝ լատինացիների օգնությունն ստանալու համար: Այդ քաղաքականությունը շարունակվել էր նաեւ Կոստանդին ԺԳ կայսեր օրոք, որը գահ էր բարձրացել 1448-ին: Սակայն Մեհմեդ Բ սուլթանը որոշել էր վերջ տալ կայսրությանը, ուստի ճնշելով հույների համառ դիմադրությունը՝ նա 1453 թ. մայիսի 29-ին կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը գրավեց եւ Ֆաթիհ կամ Հաղթական տիտղոսը վերցրեց: Սբ Սոֆիայի տաճարում մահմեդական աղոթք կատարվեց, քաղաքը ենթարկվեց կոտորածի ու կողոպուտի, սպանվեցին կայսրն ու պատրիարքը: Այս ամենի շնորհիվ Օսմանյան պետությունը վերածվեց կայսրության: Օսմանցիները շարունակեցին առաջանալ դեպի Փոքր Հայք՝ հարվածելով կարամանցիներին եւ մի շարք քաղաքներ գրավելով եգիպտացիներից, որի հետեւանքով էապես մեծացավ նրանց հպատակ հայերի թիվը:

Օսմանները Կոստանդնուպոլիսը հռչակեցին իրենց կայսրության մայրաքաղաք եւ հունական հոծ զանգվածին հակակշիռ հաստատելու նպատակով որոշեցին այնտեղ հոծ հայկական գաղթականություն հաստատել: Դրանով էլ սկիզբ է առնում հայկական հոծ համայնքը բյուզանդական երբեմնի մայրաքաղաքում: Դրան նպաստելու նպատակով՝ սուլթանը Պոլսում հայկական պատրիարքություն հաստատեց, որն առանձին լուսաբանության կարիք ունի:

Աղթամարի Զաքարիա կաթողիկոսը, որ Էջմիածին փոխադրվելու հույսով համաձայնվել էր կաթողիկոսարանի՝ Էջմիածնում վերահաստատմանը, հուսախաբ եղավ, երբ կաթողիկոս ընտրվեց Կիրակոս Վիրապեցին: Սակայն վերջինիս օրոք Էջմիածնի եւ Աղթամարի կաթողիկոսությունների հարաբերությունները հաշտ ընթացան: Սակայն վիճակը փոխվեց, երբ կաթողիկոս հռչակվեց Գրիգոր Ժ-ն: Զաքարիան խզեց կապերը վերջինիս հետ՝ կաթողիկոս ճանաչելով Կիրակոսին: 1446 թվին գրված մի հիշատակարան կաթողիկոսներ է արձանագրում Կիրակոսին եւ Զաքարիային: Կիրակոսի մահից հետո Զաքարիան իրեն Կիրակոսի հաջորդ համարեց եւ 1448-ին հիշատակվում է իբրեւ Էջմիածնի կաթողիկոս: Նա անգամ սին հույսեր էր փայփայում, որ փոխադրվելու է Էջմիածին: Սակայն այդ հնարավոր չէր, քանի որ սյունեցիները եկեղեցական հարցերում երկրորդ պլան էին մղել վասպուրականցիներին:



1441-ից հետո Սիս աթոռը մի պահ խանգարվեց, եւ հաջորդականությունը խաթարվեց: Այդ են հավաստում մի շարք հիշատակարաններ: Մեկ այլ հիշատակարան նշում է անգամ, որ Սիս աթոռը 25 տարով խափանվեց՝ Գրիգոր Լուսավորչի Աջի անհայտանալու կապակցությամբ: Սա, իհարկե, պարզապես սխալ է, քանի որ, ինչպես ցույց է տալիս Մ. Օրմանյանը, մեկ ուրիշ հիշատակարան խափանման շրջանը համարում է 5 տարի: Ընդհատում եղավ, սակայն Թովմա Մեծոփեցու հաղորդմամբ՝ հետո հակառակությամբ կրկին կաթողիկոս ձեռնադրեցին Սսում: Դրան մեծապես նպաստեց Կիրակոսի գահընկեցությունը, Գրիգոր Ժ-ի կաթողիկոսանալը եւ էջմիածնական խնդիրների ծավալվելը: Բուն Հայաստանում պառակտությունները խրախուսեցին կիլիկեցիներին, որ նրանք չճանաչեն Կիրակոսին, Գրիգորին եւ Զաքարիային ու վերականգնեն Սիս կաթողիկոսական աթոռը: Պատահական չէ, որ Թովմա Մեծոփեցին Սիս աթոռի վերականգնման համար մեղադրում է Հերմոնեցուն եւ նրա անհամ քաղաքականությանը: Սիս կաթողիկոս ձեռնադրվեց Կարապետ Եվդոկացին, որը նախկինում ամուսնացած քահանա է եղել: Նրան եպիսկոպոս էր ձեռնադրել Կիրակոս կաթողիկոսը: Համենայն դեպս, Կարապետ Եվդոկացին կամ Թոխատեցին ճարպիկ, գործունյա եւ մտավոր անձ է եղել:



Ուշադրություն է գրավում մի կարեւոր հանգամանք, թե ինչպես Սիս կաթողիկոսությունը վերականգնվեց Լուսավորչի Աջի անհայտանալու պայմաններում: Հայտարարվեց, որ Աջը հայտնաբերված է, ուստի կարելի է աթոռը վերականգնել: Մյուս կողմից՝ Լուսավորչի Աջը հայտնվել էր Վաղարշապատում եւ հիմք հանդիսացել Կիրակոսի հովվապետության համար: Սիս աթոռի վերաբացումը չէր կարող լինել 1446 թվից առաջ, իսկ Կարապետի կողմից Աջը գտնելը եւ դրա հիման վրա կաթողիկոսանալը բոլորովին չի հավաստում, որ դա իսկական Աջն էր: Պարզապես Կարապետ Եվդոկացուն հաջողվեց Լուսավորչի բուն Աջի նման նոր աջ պատրաստել, մեջը Լուսավորչից մասունք զետեղել եւ այն մատուցել որպես Աջի վերահայտնություն: Պատահական չէ, որ «գտնելու» մանրամասներն այդպես էլ չեն հայտնվում, քանի որ ոչ մի հայտնություն էլ չէր եղել:

Կարապետ Եվդոկացին կաթողիկոս ձեռնադրվեց 1446 թվին: Իր դիրքն ամրապնդելու համար Կարապետը մեկնեց Կահիրե՝ Թահիր սուլթանի մոտ, սակայն երբ նա ժամանեց, արդեն գահակալում էր Աբու-Սայիդ Չաքմաքը: Հասկանալի է, որ Կարապետը կամենում էր իր հաստատության հրովարտակ ստանալ եգիպտական սուլթանից՝ որպես Եգիպտոսի սուլթանության հպատակ հայերի կաթողիկոս: Ուղեւորության ընթացքում նա հանդիպեց Երուսաղեմի պատրիարք Աբրահամին եւ օգնեց նրան, որ պատրիարքարանն ազատվի պարտքերից եւ նրան վերադարձվեն իր սրբությունները: Սուլթանից ստացած նվերների մի մասը Կարապետը հանձնեց Երուսաղեմի պատրիարքարանին: Նա կամենում էր ձեռք բերել Երուսաղեմի պատրիարքության ու միաբանության համակրանքը եւ այն ենթարկել իր հովվապետությանը: Թե որոնք էին Սիս կաթողիկոսության թեմերը, դժվար է ասել: Կարելի է ենթադրել, որ Կարապետի գերագահությունն ընդունում էին Եգիպտոսի սուլթանության մեջ մտնող հայկական թեմերը: Չի բացառվում, որ Կարապետի կաթողիկոսությունը ճանաչեցին նաեւ որոշ այլ թեմեր: Գոնե, Մ. Օրմանյանի կարծիքով, կարամանցիներին ու օսմաններին հպատակ հայերն ընդունեցին Կարապետ կաթողիկոսի հոգեւոր իշխանությունը: Այդ է հաստատում շուրջ 150 տարի անց ստեղծված՝ Սիս աթոռի վիճակների ցուցակը, որի մեջ հիշվում են ոչ միայն Կիլիկիան, այլեւ Երուսաղեմը, Հալեպը, Կիպրոսը, Նեոկեսարիան, Անկյուրիան, Կոստանդնուպոլիսը եւ Թեսալոնիկեն:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՒՓԻ ԳՅՈՒՏԻ ՏՈՆԸ



Ս. Աստվածամոր երկու զգեստներից բացի, որ նրա կտակի համաձայն՝ տրվեցին իր հետ ապրող երկու կանանց, գոյություն ուներ նաեւ մի տուփ: Սրան նվիրված վերոհիշյալ տոնը սահմանվել է հետեւյալ առիթով: Եկեղեցական ավանդությունն ասում է, որ սբ Կույսն իր զգեստներից մեկը նվիրել էր իր հետ ապրող մի հրեուհու: Մի օր երկու ազնվատոհմիկ հույն եղբայրներ որոշում են ուխտի գնալ Պաղեստինի սրբավայրերը: Երբ լինում են Նազարեթում, ուր ավետումն էր եղել, նրանք նկատում են, որ տեղաբնակ հիվանդների ու կույրերի հոծ բազմություն է հավաքվել մի տնակի առջեւ: Հետաքրքրությունից մղված՝ նրանք մոտենում են ամբոխին եւ տեղեկանում, որ այնտեղ՝ մի տուփի մեջ է պահվում Աստվածամոր զգեստը, որ նախնիներից ժառանգաբար հասել էր տանտիրուհուն: Ազնվական եղբայրները, համարելով, որ սբ Մարիամ Աստվածածնին պատկանող մասունքն իր պատշաճ տեղում չէ, որոշում են գաղտնապես վերցնել այն՝ համոզված լինելով, որ հրեուհին երբեք ինքնակամ չի հրաժարվի եկամտի այդ աղբյուրից: Հասնելով Երուսաղեմ՝ նրանք նմանատիպ տուփ են պատվիրում եւ վերադառնալով Նազարեթ՝ ծածուկ կերպով փոխանակում հրեա կնոջ տան նախօրինակի հետ: Այսպես, թողնելով սրբազան վայրերը՝ նրանք ժամանում են Կոստանդնուպոլիս՝ իրենց հետ բերելով այդ սրբությունը: Շուտով ազնվականների տանն սկսվում են կատարվել հրաշքներ, որոնց նախապատճառի մասին նրանք հայտնում են թագավորին: Լեւոն Մեծ կայսեր հրահանգով քաղաքի եպիսկոպոսը հիշյալ սրբությունը հանդիսավորապես զետեղում է Աստվածամոր անունը կրող եկեղեցում:

Այդ հիշարժան դեպքի առիթով հետագայում սահմանվում է «Գիւտ տփոյ սրբուհւոյ Աստուածածնի» տոնը, որն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին այս տարի նշում է հուլիսի 5-ին:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻՆ

Լույս է տեսել Մայր Աթոռի միաբան Զարեհ վրդ. Կաբաղյանի «Ամենահաս Սուրբ Սարգիս» գիրքը:

Հեղինակին հաջողվել է գեղեցիկ վերաշարադրանքով պատմել սբ Սարգսի վարքը Ներսես Շնորհալու հետեւողությամբ եւ այն հավելել օտար աղբյուրների վկայակոչմամբ, որով ցույց է տրվում այս սրբի հանդեպ եղած մեծ պաշտամունքը թե՛ Արեւմուտքում եւ թե՛ Արեւելքում:

Առանձին մի բաժին է նվիրված սբ Սարգսի մասունքների՝ Հայաստան բերելու պատմությանը, որը հայ մատենագրական ավանդույթը կապում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ:

Այս գործի առաջին բաժնում ներկայացվում են սբ Սարգսի վարքը եւ նահատակության պատմությունը՝ ըստ հայկական, ինչպես նաեւ ընդհանուր քրիստոնեական եւ արեւելյան աղբյուրների:

Դեռեւս միջին դարերից Բյուզանդական Եկեղեցու տարբեր ներկայացուցիչներ փորձել են մեղադրել Հայոց Եկեղեցուն, թե Առաջավորաց պահքը նվիրված է եղել Սարգիս անունով կախարդին, եւ որ վերջինս որեւէ ձեւով չի կարող համարվել հանուն Քրիստոսի նահատակված մի սուրբ: Ի պատասխան նման մեկնաբանությունների՝ հայ մատենագրության մեջ համարժեք ձեւով հերքվել են այդ մեղադրանքները եւ բացատրվել թե՛ Առաջավորաց պահքի խորհուրդը՝ «Առաջավոր» բառի բացատրությամբ, եւ թե՛ հստակորեն ցույց է տրվել, որ Ս. Սարգսի տոնը միայն Հայոց Եկեղեցին չէ, որ կատարում է: Հայր Զարեհը խնամքով ի մի է հավաքել մատենագրական այս բոլոր վկայությունները, որոնք ոչ միայն հերթով վերաշարադրել է, այլեւ որպես Հայոց Եկեղեցու վարդապետ՝ այս ամենի համադրմամբ վեր հանել Առաջավորացի՝ որպես Մեծ պահքին նախորդող պահքի խորհուրդը:

Երկու առանձին բաժնով ներկայացվում են Ս. Սարգսի տոնի ժողովրդական արարողությունները եւ պաշտամունքը: «Ազգագրական հանդեսի» հատորների, տարբեր տեղագրողների, ուխտավորների ու դասական հեղինակների ստեղծագործությունների միահյուսմամբ Զարեհ վարդապետին հաջողվել է ստեղծել Սուրբ Սարգսի տոնի ուրբաթ երեկոյի սպասումներով լեցուն կախարդական գիշերվա եւ բացվող առավոտի գեղեցիկ պատկերը, ուր անխառն ձեւով ցոլանում են մեր ժողովրդի եւ հատկապես երիտասարդների ջերմեռանդ հավատն ու պայծառ զգացումները, ինչպես նաեւ հայկական լեռնաշխարհի ձմեռվա դաժան բքամրրիկներին ձիավոր սբ Սարգսին ապավինելու անխախտ ու աներեր հավատը:



Գրքի վերջում, որպես հավելված, բերված է սբ Սարգսին նվիրված Շարակնոցի կանոնի՝ հայր Զարեհի կատարած բնագրին հարազատ թարգմանությունը, ինչպես նաեւ՝ սբ Սարգսին ու նրա ապավինությանը նվիրված ներբողական եւ աղոթական բնույթի մի շարք բնագրեր:

Վերջում ավելացնենք, որ 16 բարձրորակ գունավոր ներդիր եւ ճաշակավոր ձեւավորում ունեցող այս գիրքը հրատարակվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը՝ բարերարությամբ Պայծառ Ալեքսանյանի եւ Նիկոլայ ու Դավիթ Գրիգորյանների՝ ի հիշատակ իրենց սիրելի ամուսնու եւ հոր՝ Անդրանիկ Գրիգորյանի:

*Հ. ՄԿՐՏՉՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ

## «ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԵՎ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Սկիզբը՝ թիվ 11*

**2.**

Թուրք-հայկական պատերազմում թուրքերի դեմ կռվող հայ զինվորների մարտական ոգին թուլացնելուն, հայոց բանակը կազմալուծելուն միտված բոլշեւիկների ազգադավ գործունեության ողբերգական հետեւանքները, մոսկովյան հակահայ ու թուրքամետ վարիչների հետ բանակցությունների տխուր հետեւանքներն անձամբ տեսած Լ. Շանթը խորապես գիտակցում էր ձախողումների իրական պատճառները: Գերտերությունների աշխարհաքաղաքական շահերից ու նրանց զորեղ պարտադրանքներից պակաս վտանգավոր չէին մեր պետականությունը ներսից թուլացնող քայքայիչ ուժերը, համաշխարհային հեղափոխության տենդագին զառանցանքով բռնված հայ բոլշեւիկները, որոնց համագործակցությունն էլ թշնամիների հետ՝ մեզ բերեց թե՛ մարդկային, թե՛ տարածքային անդառնալի կորուստներ: Դրա հետեւանքներն էին նախկինում փառաբանվող մայիսյան խայտառակ ապստամբությունները, որ թշնամու դեմ կռվող հայ բանակի թիկունքում կազմակերպեցին Մոսկվայից, Բաքվից ու Անկարայից հրահանգավորվող հայ բոլշեւիկները, նրանց իսկ սադրած դասալքությունները, «հեղափոխական» թուրք ասկյար տեսնելիս զենքը գցելու եւ փախչելու դավաճանական կոչերն ու հորդորները, Երզնկայում, Կարսում եւ այլուր մեր կրած ամոթալի պարտություններն ու, վերջապես, պատմական հայրենիքի՝ ողջ Արեւմտյան Հայաստանի ու Արեւելյան Հայաստանի մի զգալի մասի կորուստը: Անկարելի է մոռանալ նաեւ Նախիջեւանի, Արցախի՝ նորահորջորջ Ադրբեջան պետությանը բռնակցելը, որի մեջ պակաս չի եղել նաեւ հայ բոլշեւիկների ցավալի դերը: Նախիջեւանը հայաթափելու նպատակադրմամբ այնտեղ գրեթե անկաշկանդ գործում էին թուրք Վեյսալ բեյն ու Բաքվում ստեղծված Հայհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի ստորագրած մանդատով արտակարգ լիազորություններով օժտված Վելիբեկովը, որոնք Կարաբեքիրի, Նարիմանովի ու հանցագործությունների համար դատապարտված ու հատուկ նպատակով բանտից ազատված Մուստաֆա Քեմալի հետ միասին ամեն ինչ ներդրեցին Նախիջեւանը Հայաստանին չմիացնելու համար եւ դեռ Հայհեղկոմին էլ պարտադրեցին գաղթականներով լի սոված Հայաստանի բյուջեից 25 միլիոն ռուբլի տրամադրել հօգուտ թուրքացող Նախիջեւանի (տե՛ս **Էդ. Զոհրաբյան**, Թուրքիայի եւ Ադրբեջանի հակահայկական գործունեությունը Շարուր-Նախիջեւանում Մոսկվայի կոնֆերանսի նախօրերին (1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. փետրվար) ուսումնասիրությունը, «Բանբեր Երեւանի համալսարանի, 2008, N 2, էջ 3-37): Իսկ կամակատար Հայհեղկոմը ոչ միայն չկարողացավ համարժեք գործողություններով հակակշռել ու կասեցնել թուրքական ագրեսիան, այլեւ չսանձեց Հայաստանում հայ բոլշեւիկ պաշտոնյաների իրագործած կողոպուտն ու կամայականությունները, բանտարկեց կամ աքսորեց Սարդարապատի իրական հերոսներին ու հայ նշանավոր մտավորականներին, որով էլ 1921 թ. փետրվարին իր դեմ գրգռեց հայ աշխատավորությանը: Իրոք ցավալի իրադարձություններ, որոնց վկան ու ականատեսն էր Լեւոն Շանթը, եւ որոնց նկատմամբ նա պիտի արտահայտեր նաեւ գրող-գեղագետի իր վերաբերմունքը: Նրա գեղարվեստական հզոր մտածողությունը, բնականաբար, պիտի արձագանքեր դրանց, գնահատեր խղճի մտոք եւ սերունդներին հասկանալի դարձներ կատարված ողբերգությունների իրական դրդապատճառները:

Լ. Շանթի նախորդ ստեղծագործությունների եւ մանավանդ վիպակների օրինակով գիտենք, որ «ծնունդով՝ արեւմտահայ, կրթությամբ՝ արեւելահայ, պատրաստությամբ՝ եվրոպացի»՝ նա հմուտ էր նաեւ արդիական խնդիրները կենդանի իրականության պատկերմամբ արծարծելու մեջ: Բայց 1921 թվից վտարանդի Լ. Շանթը, լավ ճանաչելով բոլշեւիկյան ռեժիմն ու գրաքննությունը, գուցե եւ Խորհրդային Հայաստանի հետ իր կապերը վերջնականապես չխզելու, իր ստեղծագործություններն այնտեղ արգելքի տակ չդնելու նպատակով ընտրել է հիշյալ եղելություններին արձագանքելու համեմատաբար «անվտանգ» եղանակ: Արդեն գիտենք, թե նա նախախորհրդային շրջանի իր թատերակներում (սա Շանթի կիրառած եզրույթն է դրամատուրգիայի կամ դրամատիկական երկի փոխարեն) պատմական նյութն ինչպես էր ծառայեցնում արդիականության շահերին: Իսկ խորհրդային տարիներին, ապրելով արտասահմանում, նա, ստեղծագործական խառնվածքից ու թեմայի ընտրության գրողական նախասիրություններից բացի, հարկադրված էր բուն ասելիքը ներկայացնել այլաբանական ենթատեքստով: Ինչպե՞ս ասեր, թե Հայաստանի մեկուսացման, մասնատման ու կործանման



պատճառները ո՛չ միայն գիշատիչ գերտերությունների աշխարհաքաղաքական շահերն ու մասնավորապես Թուրքիայի զավթողական ու հայաջինջ քաղաքականությունն էին, այլեւ հայ բոլշեւիկների կողմից հայկական ուժերի պառակտումն ու թիկունքից թշնամուն սատարելը, դասալքության քարոզներով՝ հայոց բանակը կազմալուծելը: Մեր պատմությունն արդեն ուներ այդպիսի ցավագին օրինակներ. 428 թ. Արշակունիների թագավորության վերացման, 1045 թ. Բագրատունիների թագավորության կործանման եւ Անին թշնամուն հանձնելու մեջ փոքր չէր հայ դավաճան նախարարների ու լատինամետ հոգեւորականների դերը: Կիլիկիայի հայոց թագավորության անկումն էլ առանց կենտրոնախույս հայ իշխանների ու լատինամոլների ազգադավ պառակտիչ գործունեության չի եղել: Կիլիկիայի ողբերգության մեջ մեղքի իր մեծ բաժինն, այո՛, ուներ հենց Բյուզանդական կայսրությունը, որը ոչ միայն չսատարեց իրեն դաշնակից ու հավատարիմ քրիստոնյա պաշտպանիչ վահանին, որն ամուր պատնեշ էր Արեւելքի մահմեդական գիշատիչ ախորժակների հարձակումների դեմ, այլեւ, Հայաստանն ու Կիլիկիան թուլացնելով, աննկատ փորեց հենց իր գերեզմանը:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Ժ ՋԱԼԱԼԲԵԳՅԱՆՑ
## (1443-1465)

*Սկիզբը՝ էջ 3*

Գրիգոր Ժ-ն, դժվարությամբ կաթողիկոսական աթոռ բարձրանալով, պաշտոնավարեց առանց մաքառումների ու ընդդիմության հանդիպելու: Նա պատվեց Կիրակոս կաթողիկոսին եւ չբողոքեց Սսի աթոռի վերահաստատման համար: Բանադրանքներ չեղան, եւ կապանքներ չդրվեցին: Չնզովվեց Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը, որն ստացել էր Կիրակոսի օրհնությունը: Սա մի կողմից Էջմիածնի Աթոռի թուլությունն էր հավաստում, մյուս կողմից՝ Գրիգորի ձգտումը՝ ամրապնդելու իր հովվապետությունն այդ խառնակ ժամանակներում: Նա լայն շինարարական գործունեություն ծավալեց: Դավրիժեցու խոսքերով՝ նա նորոգեց Սուրբ Էջմիածինը: Այս ամենն իր հաստատումն է գտնում Սիմեոն Երեւանցու կողմից: Նրա գործունեությունը մեծապես նպաստեց Էջմիածնի Մայր Աթոռի աստիճանական վերականգնմանը եւ զարգացմանը:

1455 թ. Գրիգորն իրեն աթոռակից դարձրեց տեր Արիստակեսին: Առաքել Դավրիժեցու այս հաղորդումը թվականի առումով հազիվ թե նշանակում է Արիստակեսի համաաթոռակալության սկիզբ, քանի որ 1448-ին Գրիգորը մահացել էր: Եվ, իրոք, հենց 1448 թ. է վերաբերում Արիստակեսի հայրապետության մասին հաղորդումը: Արիստակեսի աթոռակալությունը վասպուրականցիների համակրանքը շահելու միջոց էր, քանի որ նա վասպուրականցի էր: Արդեն մինչեւ 1448 թվականն Արիստակեսը հռչակվեց Գրիգորի աթոռակից:



Անշուշտ, լինելով աթոռակից Արիստակեսին՝ լիակատար կաթողիկոս չէր: Չնայած իր ձեռնադրությանը, նա ընդամենը փոխանորդ էր: Պատահական չէ, որ աթոռակիցները գավազանագրքի մեջ չեն ներառվում: Ուստի միանգամայն տրամաբանական է, որ Արիստակեսը հորջորջվում է ընդամենն Աթոռակալ անունով: Սակայն աթոռակից ունենալու սովորությունը խիստ տարածվեց հետագայում: Բանն այն է, որ գտնվեցին կաթողիկոսներ, որոնք չորս կամ հինգ հոգու աթոռակից դարձրին, ինչը պարզապես զեղծում էր: Այս սովորության արմատավորվելը մի կարեւոր առավելություն էր ընձեռում. ապահովվում էր կաթողիկոսների անցավագին ու անհակառակ հաջորդականությունը: Այլ խոսքով՝ կաթողիկոսի մահվան դեպքում հովվապետությունն ինքնաբերաբար անցնում էր նրա աթոռակցին: Անշուշտ, դա հակասում էր ազգային ընտրության սկզբունքին, սակայն Աթոռը զերծ էր պահում հակառակությունից եւ այլեւայլ դժվարություններից:

Հայերը բնակվել են Կոստանդնուպոլսում անհիշելի ժամանակներից, սակայն քաղաքում մեկ թեմակալ եպիսկոպոսից ավելին լինել չէր կարող: Հայերը Կոստանդնուպոլսում, հետեւաբար, եկեղեցական առանձնահատուկ դիրք չունեին, թեպետեւ շատ էին առաջացել աշխարհիկ իշխանության վերին շրջանակներում: Մեծ էր նրանց դիրքը բանակում՝ հատկապես կայսեր թիկնապահ գնդում: Հայերը մայրաքաղաքում ստիպված էին, թեկուզեւ առերես, հետեւել քաղկեդոնականության, քանի որ Կոստանդնուպոլսում հայ թեմակալություն չկար: Հայկական Եկեղեցու գոյությանը կայսրության մայրաքաղաքում հանդիպում ենք 1360-ին, երբ հիշատակվում է հայոց Սբ Սարգիս եկեղեցին: Այդ շրջանում հայերն ավելի հակված էին դեպի լատինները, իսկ հույներն անհաջող փորձեր էին կատարում՝ հայերին իրենց մերձեցնելու ուղղությամբ: Ցավոք, այս եկեղեցին այլեւս չի հիշվում, եւ նրա գտնվելու թաղամասն անգամ անհայտ է: Ավելի որոշակի են մեր տեղեկությունները Ղալաթիո հայոց եկեղեցու մասին: Վերջինս կառուցվեց ոչ թե քաղաքի պարիսպների ներսում, այլ քաղաքի հանդիպակաց՝ Բերայի արվարձանի ծովափնյա շրջանում, որ ճենովացիները Calata էին կոչում, այսինքն՝ քարափ կամ բեռներ թափելու ծովափ: Եկեղեցու ճակատի արձանագրություններից պարզվում է, որ այն կառուցվել է 1391 թ., չնայած արձանագրությունը գրվել է 1436-ին: Մյուս կողմից՝ Երեմիա Քյոմուրճյանը 1436-ին է դնում եկեղեցու շինությունը: Պարզվում է, որ եկեղեցին կաֆայեցի հայերն են կառուցել: Ենթադրել, թե դա հռոմեադավան հայերի եկեղեցի էր, հավանական չէ, քանի որ Կաֆայի հայերի մեծ մասը, ավելին՝ մեծագույն մասը, հայադավան էր: Սակայն եկեղեցու կառուցման առավել հավանական շրջանը մինչեւ 1453 թվականն է, քանի որ ըստ արձանագրության՝ այն շինվել է հունաց իշխանության օրոք: Կոստանդնուպոլիսը սուլթանության մայրաքաղաք հռչակած Մեհմեդ Բ-ն հայերին պատրիարքության իրավունք տվեց:

*Շարունակելի*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

**ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ**

# ՆԻՆՎԵԱՑԻՆԵՐԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ահա Հովնան մարգարեին հասավ [Աստծո] հրամանը՝ քարոզելու Նինվեին: [Մարգարեն] քաղաք մտավ, եւ նրա ահարկու ձայնը շփոթեցրեց բոլորին: Հեթանոսների քաղաքը խռովվեց եբրայեցու քարոզից. այն ծովի պես ալեկոծվեց [խոսքից] Հովնանի, որ ելել էր ծովից, եւ փոթորկվեց, ինչպես ալիքները՝ ծովում: Նա ծով իջավ եւ փոթորկեց այն, ելավ ցամաք եւ խռովեցրեց այն: Ծովն ալեկոծվեց, երբ նա փախավ, ցամաքը շարժվեց, երբ նա քարոզեց: Ծովը հանդարտվեց աղոթքով, իսկ ցամաքը՝ ապաշխարությամբ: Հովնանին փրկեցին աղոթքները, նինվեացիներին՝ իրենց խնդրվածքները: Հովնանը փախել էր Աստծուց, նինվեացիները՝ սրբությունից: Նրանց երկուսին էլ, իբրեւ պարտականների, պաշարել էր ճշմարտությունը. երկու կողմերն էլ ապաշխարություն ցույց տվեցին եւ փրկվեցին: Դրանից Հովնանը սովորեց, որ ապաշխարողները կփրկվեն: Երբ նա ելավ ծովից, որպեսզի կանգնեցնի ընկղմվող քաղաքը, ծովը ալեկոծվեց: Արդարը բացեց իր բերանը, Նինվեն լսեց ու տրտմեց: Մեկ եբրայեցին մի ամբողջ քաղաք մատնեց խռովության: Հովնանի բերանը լցվեց խոսքով եւ գուժեց բոլորին. մահ բաշխեց բոլոր նրանց, ովքեր լսեցին: Իր ձայնով կոտրեց թագավորի սիրտը. քաղաքի տապալման պատճառը մեղքն էր: Մեկ խոսքով մահվան գինի խմեցրեց:

Լսեց թագավորն ու տրտմեց: Հանեց իր թագն ու խոնարհվեց: Լսեցին իշխաններն ու տագնապեցին եւ պատմուճանի փոխարեն քուրձ հագան: Լսեցին պատվարժան ծերերն ու մոխիր լցրեցին իրենց գլխին: Լսեցին հարուստներն ու իրենց գանձարանները բացեցին աղքատների առջեւ: Լսեցին պարտատերերն ու [պատռելով] մուրհակները՝ արդարություն գործեցին: Լսեցին փոխառուներն ու փութապես հատուցեցին պարտքերը: Յուրաքանչյուրն իր անձն արդարացնելու մասին խորհեց: Այնտեղ չկար խորամանկ մարդ, [որ մտածեր], թե ինչպես գրկի. [բոլորը] մտել էին ճշմարտության [համար] պատերազմի մեջ, որպեսզի յուրաքանչյուր ոք շահի իր անձը: Հովնանին լսեցին գողերն ու ավազակները եւ իրենց գողոնը վերադարձրին տերերին: Կողոպուտի տերերն արհամարհեցին իրենց ունեցվածքը եւ ներեցին ավազակներին: Յուրաքանչյուրը խոշտանգում էր իրեն, որովհետեւ [աստվածային] բարկությունը բոլորին էր կշտամբում: Լսեցին մարդասպանները եւ խոստովանեցին՝ արհամարհելով ահը դատավորներից: Լսեցին դատավորներն ու լռեցին, քանի որ [աստվածային] բարկությունն ստիպեց, որ դադարեցնեն դատաստանները: Յուրաքանչյուր ոք ողորմություն սերմանեց, որպեսզի փրկություն հնձի: Հովնանին լսեցին մեղավորները եւ խոստովանեցին իրենց մեղքերը: Լսեց աղտեղացած քաղաքը եւ ազատվեց իր աղտեղությունից: Հովնանի ձայնից նաեւ հարուստ տիկինները խոնարհեցրին իրենց հպարտ խորհուրդները: Այն ապաշխարության առջեւ մերը ստվերի նման է, այն խնդրվածքների առջեւ մերը նմանության պես է: Մեր մեջ այս պահքի օրերին քչերն են թողնում իրենց անօրենությունները. նինվեացիները շատ ողորմություն տվեցին. նինվեացիներն ազատեցին ծառաներին: Ողորմելի՛ համարենք ազատներին:

Երբ Հովնանն առաքվեց այն քաղաք, բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Երեք օր եւս, եւ Նինվեն պիտի կործանվի» (Հովն., Գ 4): Նրա ձայնից քաղաքը ցնցվեց, մեգն ու մառախուղը պատեց այն: Ահաբեկվեց Նինվեն, քանզի տեսավ մարգարեի դեմքը՝ ահարկու ու խիստ: Քարոզը քաղաքացիներին չէր խրատում, թե՝ ապաշխարեցե՛ք, որպեսզի ցույց տա, թե ով հիվանդ է, ինքը խնդրի իր բժշկության համար: Չասաց, թե՝ ծո՛մ պահեցեք, այլ նրանց կամքին թողեց: Նրանց առջեւ փակեց դուռը, որպեսզի ցույց տա, թե ինչ ուժով պիտի բախեն. թե ապաշխարողը որքան պիտի խնդրի, որ իր խնդրանքներով ողորմություն ստանա: Ահարկու ձայնը սարսափեցնում էր, ինչպես սուր, որպեսզի անամոթը սարսափից բժշկվի իր



հանցանքներից: Քաղաքը տեսավ Հովնանին ու խռովվեց. իբրեւ պատիժն իրականացնող էր կանգնած նրանց մեջ:

Անկյալ հիվանդները վեր կացան եւ ընթացան դեպի ապաշխարություն: Հիվանդը լքեց իր մահիճը, քանի որ տեսավ բարկության գավազանը: Առողջները հիվանդացած էին ցանկությունների հիվանդությամբ: Այն ժամանակ խափանվեցին թագավորների ճաշն ու մեծամեծների ընթրիքը. եթե ծծկեր մանուկները կաթ չէին ուտում, ապա ո՞վ ուրախություն կփնտրեր: Եթե անասունները ջուր չէին խմում, ապա ո՞վ այնտեղ գինի կխմեր: Եթե թագավորն էր քուրձ հագնում, ապա ո՞վ պատմուճան կհագներ: Եթե անառակները սրբվեցին, ո՞վ իր ամուսնուն կդառնար: Եթե լկտիները զարհուրեցին, ո՞ւմ էր պետք ծաղրը: Եվ քանի որ հանապազ շարժվում ու երերում էր քաղաքը, ո՞վ կպահեր իր տունը: Ոսկին թափված էր, եւ ոչ ոք չէր գողանում, բաց էին գանձարանները, եւ ոչ ոք չէր հափշտակում: Պագշոտները փակում էին իրենց աչքերը, որպեսզի կանանց չնայեն: Կանայք տգեղացնում էին իրենց, որպեսզի տեսնողները չգայթակղվեն: Քանզի հաստատապես գիտեին, թե հասել են վախճանն ու կորուստը, եւ յուրաքանչյուր մարդ հալածում էր մեղքը: Ամեն մարդ իր ընկերոջը աղոթքի էր կոչում. ամբողջ քաղաքը եղավ իբրեւ մեկ մարմին, իբրեւ մեկ ապաշխարող: Չկար մեկը, որ աղոթքի ժամին դրսում լիներ. հավաքվում էին, ինչպես [մի մարմնի] անդամներ, եւ միմյանց համար աղոթք էին անում, քանզի ամբողջ քաղաքն էր հրավիրվել դեպի կորուստ: [Նրանց ապաշխարությունը] վայելուչ էր եւ մանուկների լացով, քանզի նրանք ամբողջ քաղաքն էին լացեցնում: Անմեղ [մանուկների] ձայնը գալարեցնում էր նրանց ծնողների սրտերն ու աղիքները: Ծերերը մոխրաթաթախ էին լինում, կտրվում ու թափվում էին պատվական ալիքները: Այրերի ու կանանց գլուխները ճաղատանում էին նրանց աղոթքներից: Մանուկները շրջապատում էին իրենց մայրերին, քաշում իրենց մոտ, որ մահից փրկեն իրենց: Շարժման ձայնից մանուկը փախչում էր մոր ծոցը: Հաշվում էին Հովնանի՝ իրենց ասած օրերի լուսաբացն ու երեկոն, հաշվում էին անցնող ու եկող օրերը, օրն ավարտվելիս աղաղակ էին բարձրացնում, քանզի քիչ ժամանակ էր մնում, օրվա ավարտի հետ նրանց հոգին էր մարմնից ելնում: Որդիները, լաց լինելով, հարցնում էին իրենց հայրերին. «Ասացե՛ք մեզ, հայրե՛ր, այն եբրայեցու ասած օրերից քանի՞ օր մնաց, ո՞ր ժամը նշանակեց մեզ՝ ողջ-ողջ դժոխք իջնելու, ո՞ր օրը պիտի կործանվի մեր գեղեցիկ քաղաքը, ո՞րն է վախճանի օրը, որից հետո այլեւս չենք լինելու, ո՞ր օրն է ամեն բան ցնորք դառնալու, ո՞ր օրն է մեր կորստյան լուրը տարածվելու համայն տիեզերքում: Կանգնեն տեսնողները եւ քաղաքը տապալված կտեսնեն իրենց տերերի վրա»:

*Շարունակելի*

*Գրաբարից փոխադրեց*
*Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ*



Ի. Կրամսկոյ. «Գուշակություն»

# ՄԵՂՔԻ ՎԱՐՁԸ

Գաղտնիք չէ, որ այսօր մեզանում քիչ չեն մարդիկ, ովքեր տառապում են այս կամ այն հիվանդությամբ, ունեն հոգեկան ու հոգեւոր խնդիրներ, ընտանեկան ու առտնին հոգսեր, որոնց լուծումները հաճախ թվում են անհաղթահարելի, մշուշոտ: Այս պարագաներում ահա ոմանք Աստծո օգնությանը, բժիշկներին, հոգեբաններին դիմելու փոխարեն, «սրտամոտ», «բանիմաց» մարդկանց խորհուրդներին ապավինելով, փորձում են ապաքինվել, իրենց կնճռոտ խնդիրները լուծել էքստրասենսների, գուշակների, շամանների, գրբացների եւ այս կարգի այլ ու կասկածելի «հրաշագործների» օգնությամբ՝ առավել վնաս հասցնելով իրենց առանց այդ էլ հիվանդ ու տկար մարմիններին եւ որ ավելի վտանգավոր է՝ հոգիներին: Այս շարքում չմոռանանք նաեւ տառապանքների աղբյուրն ու թիրախը «տեսնող» եւ դրանք իսպառ վերացնելու երաշխիք տվող «թուղթ ու գիր» անող-քանդողների՝ օրեցօր ավելացող հոծ բանակները: Այս «հրաշագործները» իրենց ծառայությունները մեծամասամբ հրամցնում են մարդկանց նաեւ սրբապատկերների առկայությամբ՝ իրենց թակարդն ընկած միամիտներին, ավետարանական ճշմարտություններից անտեղյակ մարդկանց համոզելու համար, թե իբր իրենց «շնորհը» ի վերուց՝ Աստծուց է տրված:

Ցավալի է, որ քրիստոնեությունը պետականորեն առաջինն ընդունած ժողովուրդն այսօր մոռացության մեջ է թաղում իր պապերի եւ հայրերի հավատքը եւ սովյալների պես վազում կախարդների ու խաբեբաների գիրկը, որոնց նպատակը միմիայն «անուս» հոգիներին գրավելն ու դրամաշորթությունն են:

Սակայն այսօր անդրադառնանք կախարդներին:

Կախարդները սովորաբար ոչ մեծ գումարով են աշխատում, բայց՝ երկարատեւ, այնքան, մինչեւ զգում են, որ արդեն դատարկել են հաճախորդի դրամապանակն ու գրպանները: Առաջին մի քանի այցելությունների ժամանակ հիվանդն ասես շոշափելիորեն «զգում» է սուր ցավի մեղմանալը եւ հավատում, թե «հրաշագործը» կարողացավ ամոքել իրեն՝ իբր սեփական անձը վտանգելու, ցավն իր վրա վերցնելու գնով: Սակայն բուժումն ավարտելուց հետո՝ օրեր կամ ամիսներ անց, ցավը մի քանի այլ հիվանդությունների (լուսնոտություն, ցավագարություն եւն) հետ միասին վերադառնում է՝ անասելի տանջանքների մեջ գցելով նախկին հիվանդին: Այդ անմարմին դիվային ուժերը, որ մի ժամանակ պտտվում էին խաբեբա «բժշկի» գլխավերեւում, այժմ արդեն գտել են իրենց ապաստանը բժշկվողի մարմնի մեջ:

Այսօրինակ «բժիշկները» սովորաբար իրենց «փրկչական» կարիերան սկսելուց առաջ մի հիասքանչ հեքիաթ են պատմում, համաձայն որի՝ երեւացած տեսիլքն է պատվիրել իրենց «հրաշագործություններ ու բժշկումներ» անել: Հրապուրիչ է Աստծո անունը տալը, բայց ներքուստ ուրիշի կամքը կատարելը: Մարդ արարածն իր ստեղծման օրվանից միշտ փափագել է վայելել Աստծո ներկայությունը, սակայն խավարի իշխանի գայթակղությամբ զրկվել է դրախտից, արտաքսվել եւ հիմա փոխանակ զղջալու եւ ափսոսանքի արտասուք հոսեցնելու, գնահատելու խաչյալ Փրկչի աշխարհ բերած հաղթանակը՝ իր մեղքը բազմապատկելու է գնում:

Ի՞նչ կպատահեր, եթե կախարդներից մեկն իր հաճախորդին ասեր. «Ես սատանայի օգնությամբ եմ քեզ բժշկելու, համեցի՛ր...»: Հաճախորդը սարսափահար իրեն դուրս կնետեր:

Հիշենք Կաշպիրովսկու բժշկումները: Որչափ մեծ էր նրա համբավը, բայց ի՞նչ պարզվեց տարիներ հետո. բոլոր բժշկվողները ոչ թե բուժվել էին, այլ տարիներ անց հարյուրապատկել իրենց ցավերը եւ մահացել տանջանքների մեջ:

Եթե զգում եք, որ նման մարդիկ փորձում են գրավել ձեզ, աղոթեք. «Տեր Հիսուս Քրիստո՛ս, Աստծո Միածին Որդի՛, ողորմիր ինձ՝ բազմամեղիս»: Մի՛ խաբվեք անգամ կախարդի այն խոսքերից, թե սրբերի առաջ միասին աղոթելու եք կանգնում, անգամ նրանց հորդորներից՝ եկեղեցուց օրհնված մոմ առնելու կամ օրհնված ջուր բերելու պահանջներին... Հաճախորդներից շատերը մտածում են, թե օրհնված մոմի եւ ջրի ներկայությունը պետք է փախուստի մատնի առկա չար ուժերին, սակայն իրականությունն այլ բանով է սքողված. այս սրբությունները կախարդի հարկի տակ են բերվում՝ դրանք ծաղրուծանակի ենթարկելու նպատակով: «Ինչպե՞ս»,- կհարցնեք դուք:

Ասենք այսպես՝ վերցնում են օրհնված ջուրը, նրա մեջ աղ կամ լուցկու հատիկներ լցնում եւ վրան մրմնջում սեւ մոգությանը բնորոշ հմայախոսություններ՝ արդեն իսկ պղծելով այն, իսկ վառված մոմն անպայման դնում կախարդական շրջանակի կամ քառակուսու մեջ: Այնուհետեւ սկսվում է այցելուին հմայելու հերթը: Շատ հաճախ կախարդները, ուղիղ նայելով իրենց թակարդն ընկած մարդկանց աչքերի մեջ, փորձում են հիպնոսի միջոցով եւ չար ուժերի ազդեցությամբ ներխուժել նրա գիտակցական ոլորտը: Այս քայլի բարեհաջող ավարտից հետո հաճախորդն այլեւս կախարդի գերին է՝ խայծը կուլ տված ձկան նման, եւ կարող է ենթարկվել այն ամենին, ինչ դիվային ուժերը կթելադրեն: Կախարդը նրա կյանքի անցյալից պեղում է տարաբնույթ դրվագներ, պարզում այս կամ այն բարեկամի արդար, մաքրասիրտ լինելը, բացահայտում մեկ այլ մերձավորի նենգությունն ու նրա կողմից բարձի կամ հագուստի մեջ թաքցրած «թուղթ ու գիրը»՝ հավատ ներշնչելով, որ եթե նրան բախտը չժպտար, ու նա չգար իր մոտ, ապա մոտակա ժամանակներում պիտի կնքեր իր մահկանացուն:

Սկզբնապես թվում է՝ ինչ-որ հանգստություն է իջնում խաբված հաճախորդի վրա, միտքն ու բանականությունն ասես թարմանում, սակայն հետո հոգում սկսվում է ցավագին մի խառնաշփոթ. սատանան, շահելով եւս մեկին, մտածում է նրան ոչնչացնելու նոր միջոցի մասին:

*Շարունակությունը՝ էջ 7*

Կից ձեմյակում

# ԲԱՐԵԿԱՄ

## Մեր հյուրն է Երեւանի Սբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ Եսայի քհն. ԱՐԹԵՆՅԱՆԸ



**- Տե՛ր հայր, նախ փորձենք պարզել՝ ի՞նչ է բարեկամությունը, ո՞վ է բարկամը՝ ըստ քրիստոնեական աշխարհընկալման:**

- Ո՞վ է բարեկամը... Այստեղ բավականին դժվար է սպառիչ սահմանումներ տալը, սակայն մեկ հստակ ճշմարտություն կա բոլորիս համար. բարեկամ ընտրելիս չափազանց կարեւոր է առաջնորդվել այն սկզբունքով, որ նա պիտի ունենա նույն հավատքը եւ նվիրումը Աստծու հանդեպ: Մեկը, որ հավատում է Աստծուն, Նրա պատգամներն է ձգտում իրագործել իր կյանքի ընթացքում, չի կարող երբեք անկեղծ բարեկամության մեջ լինել մեկ այլ մարդու հետ, ով «Աստված» բառը փոքրատառով է գրում: Հետեւաբար, բարեկամ դառնում են նախ եւ առաջ գաղափարների, հավատալիքների միությամբ: Դա պատգամելով՝ հաստատում է եւ Ավետարանը: Հիշո՞ւմ եք՝ ինչ ասաց մեր Տերը. «Ով կատարում է կամքը Իմ Հոր, որ երկնքում է, նա՛ է Ինձ եղբայր եւ քույր եւ մայր» (Մատթ. ԺԲ 50): Ընդհանրապես, միությունը հոգեւոր կյանքում՝ առաքինությունների եւ աստվածային պատվիրանապահության մեջ, հիմքը եւ առիթը պիտի լինի ամուր ու հաստատուն բարեկամության: Եվ ահա Ավետարանը մեզ հորդորում է սեր. «Այս է Իմ պատվերը. որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ», եւ ինքնազոհաբերում. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 12-13):

**- Տե՛ր հայր, ըստ Ձեզ՝ կա՞ մարդ, որ բարեկամներ չունենա (խոսքը, իհարկե, իսկական բարեկամության մասին է):**

- Կա, անշուշտ, կա: Սակայն դա նորմալ երեւույթ չէ: Մարդն իր շրջապատում «չի գտնում» վստահելի մեկին, իրեն արժանի մեկին եւ հիմնականում փորձում է մեղադրել ուրիշներին, որոնք «լավը չեն»: Իրականում, սակայն, խնդիրը հենց ի՛ր մեջ է: Այդ խնդիրը կարող է առաջանալ մի պարզ պատճառով, ինչին հաճախ ուղղակի չենք էլ անդրադառնում: Բանն այն է, որ հասարակությունը, որի միավորներն ենք յուրաքանչյուրս, որի մեջ ունենք ընկերներ, բարեկամներ, համախոհներ, նաեւ ոչ համախոհներ, այդ նույն հասարակության մեջ ամենքս էլ, բնականաբար, փորձում ենք ինքնահաստատվել: Մարդիկ, ովքեր բարեկամներ չունեն, չունեն այն պարզ պատճառով, որ սխալ են ընտրել իրենց ինքնահաստատման ճանապարհը: Այդ ճանապարհը նրանք տեսնում են ոչ թե անձի, այլ անհատականության ինքնահաստատման մեջ: Տարբերությունն այն է, որ անհատականություն հաստատելու ճանապարհին մենք չենք կարող չշեղվել, որովհետեւ փորձում ենք հակադրվել՝ «այս մարդն ինձնից լավն է», իսկ ավելի հաճախ՝ «այս մարդն ինձնից վատն է», ինչից եւ ծնվում են մեղքեր՝ նախանձ, բամբասանք, չարություն, չարակամություն եւ բազմաթիվ այլ բացասական երեւույթներ, որ կարող են դրսեւորվել մեր կյանքում: Այնինչ պետք էր, որ ինքնահաստատման ճանապարհին հաստատեինք մեր անձը, այն անձը, որ Աստված հենց մեզ տվեց, այն անձը, որ «թաքնված է» մեր հոգու նվիրական ծալքերում՝ աստվածապատկեր, բարի, առաքինի, անմեղ... Այնպիսին, ինչպիսին որ Աստված ստեղծեց մեր նախածնողներին՝ մինչեւ մեղանչումը:

**- Իսկ ինչպե՞ս տարբերել «բարեկամին» ճշմարիտ բարեկամից. չէ՞ որ երբեմն մարդիկ կեղծում են:**

- Կարծում եմ՝ դրա համար հատուկ ջանք թափելու կարիք չկա: Ի վերջո, մեր կյանքի նպատակը ոչ թե բարեկամներ շահելն է, այլ բարեկամներ շահելը միայն ստորոգելին է մեր ընդհանուր բարի ընթացքի, մեր ազնիվ եւ առաքինի կյանքի: Ըստ այդմ էլ՝ մեր շուրջը հավաքվում են բարեկամներ, ինչը բնական է ու նորմալ: Ինչպես նաեւ հատուկ ջանք պետք չէ թափել, որպեսզի կեղծ բարեկամներին հայտնաբերենք եւ փորձենք նրանցից զգուշանալ: Պարզապես հիշենք սուրբգրային հորդորը, որ ասում է՝ ամեն պատահական մարդու տանդ մեջ մի՛ ընդունիր: Եվ սա ավելորդ զգուշավորություն չէ, իհարկե: Բայց, վստահ եղեք, ցանկացած առաքինի մարդու, ով հույսը դրել է Աստծու վրա եւ ապրում է Տիրոջ հետ միության մեջ, Աստված պիտի պահպանի նաեւ կեղծ բարեկամներից:

**- Տե՛ր հայր, բոլորիս հայտնի արտահայտություններ կան՝ «ժողովուրդների բարկամություն», «բարեկամ պետություններ», «բարեկամ ազգեր» եւ այլն: «Հռչակագրային» բարեկամության այս դրսեւորումը, ինչը գուցեեւ արդարացված է քաղաքական դաշտում, ըստ շատերի՝ կարծես թե աստիճանաբար թափանցում է նաեւ զուտ մարդկային հարաբերությունների ոլորտ: Ի՞նչ կասեիք:**

- «Ժողովուրդների բարեկամություն» ասվածը, որքան էլ բաղձալի ու նվիրական գաղափար լինի, ընդամենը տեսական մի բան է, որը, ցավոք, անիրականանալի է կյանքում: Բայց գոնե այս գաղափարն առիթ պիտի դառնա, որ ազգերն ու ժողովուրդներն ինչ-որ չափով ձգտեն դրան: Բոլոր դեպքերում դա նույնպես սկսվում է մարդկային պարզ հարաբերություններից: Անգլիական մի ասացվածք կա. «Բարեկամությունն սկսվում է տանից, ընտանիքից եւ ամեն մեկիս հոգուց»: Սակայն երբ մեր ընտանիքներում, մեր ընկերական շրջապատում, հասարակության մեջ այդպիսին չենք, բնականաբար անիմաստ է խոսել ժողովուրդների իսկական, անկեղծ բարեկամության մասին, որտեղ շահերի ահավոր բախումներ կան:

**- Բարեկամությունը՝ բարի կամեցողությունը, անպայման փոխադա՞րձ պետք է լինի: Եկեղեցու հայրերն ուսուցանում են. նախ ինքներս անկեղծ լինենք մեր բարեկամության մեջ՝ առանց որոշակի ակնկալիքների:**

- Դուք, անշուշտ, ակնարկում եք շահադիտական նպատակներով բարեկամությունը, ինչը միանշանակ մերժում են թե՛ Աստվածաշունչը, թե՛ եկեղեցու սուրբ հայրերը եւ թե՛ մեր ժողովրդական դարավոր իմաստությունը, որ ասում է. «Լավություն արա՝ ջո՛ւրը գցիր»: Ինչպես մեր զրույցի սկզբում նշեցինք, բարեկամությունը ենթադրում է սեր եւ նվիրում, եւ եթե այս երկու հիմքերի վրա չի հաստատված, այն չի կարող լինել ճշմարիտ: Այո՛, եթե նայենք մեր այսօրվա հասարակությանը, կտեսնենք, որ մարդիկ հաճախ բարեկամանում են մեկի հետ, ումից ունեն որոշակի ակնկալիք՝ նյութական կամ այլ, ում կողքին են, եթե նա հաջողության մեջ է կամ կարող է ինչ-որ ձեւով հագեցնել իրենց շահադիտությունը եւ ումից անմիջապես փախչում են, հենց որ վերջինս հայտնվում է ձախորդության մեջ:

Ձեր շրջապատում որքա՞ն այդպիսի քավոր-սանիկներ կան՝ իրարից սառած, նույնիսկ թշնամացած: Ինչո՞ւ, որովհետեւ բարեկամանալու մղիչ ուժը, պատճառը մաքուր չի եղել, նյութն է եղել, այսինքն՝ շահադիտությունը: Իսահակյանի հայտնի պոեմի «բարեկամին» են հիշեցնում սրանք: Սակայն... այս ամենի պատասխանը նրանք պիտի ստանան Աստծուց:

**- Ձեզ ծանո՞թ է «ոխերիմ բարեկամ» արտահայտությունը:**

- Ծանոթ է, բայց ոչ ընդունելի: Ծանոթ է նաեւ այն խոսքը, թե՝ եթե այսինչ մարդու նման մի բարկամ էլ ունենամ, ինձ այլեւս թշնամիներ պետք չեն: Սրանք նորից կեղծ բարեկամության օրինակներ են, որոնց մեջ, ցավոք, հաճախ «մեծ դերակատարություն» են ունենում մեր իսկ արյունակից հարազատները: Գիտեք՝ արյունակցական կապերը միշտ էլ պարտավորեցնող են, եւ հրաշալի է, երբ ամեն ինչ ներդաշնակ է ու սիրով լեցուն: Սակայն այդ պարտադրվածությունը երբեմն կարող է ավերիչ լինել, ինչն առավել ցավալի է: Դավաճանության զանազան դրսեւորումներ ենք տեսնում, որ նույնպես, ցավոք, մեր կյանքի «բնականոն» ընթացքի մեկ բաղադրիչն է դարձել:

**- Աղանդավորները մեր դուռը թակում են որպես բարեկամներ՝ սիրով, անուշ ժպիտով, քաղցր խոսքերով, խոնարհի կեցվածքով...**

- Սրանց մասին Տերն արդեն զգուշացրել է Իր Լեռան քարոզում (տե՛ս Մատթ. Է 15-20). «Ոչխարների զգեստներով հափշտակող գայլեր»: Կարծում եմ՝ ամեն ինչ ասված է: Ուղղակի, ինչպես Տերն է ասում, իրենց գործերից ճանաչենք նրանց: Սատանան նույնպես բարի հրեշտակի տեսքով է մեզ այցելում, բայց մենք հո գիտենք, որ սատանան մեր բարին չի կամենում: Համեմատությունը գուցե ծայրահեղ ստացվեց, քանի որ ի տարբերություն սատանայի՝ աղանդավորները մեր թշնամիները չեն, այլ մեր ազգի, նաեւ մեր Եկեղեցու զավակներն են, մեր քույր-եղբայրներն են, ովքեր այս պահին մոլորված են: Իրականում նրանք նեղության մեջ են, եւ մեր պարտքն է նրանց համար աղոթել եւ փորձել փրկել նրանց մոլության ճիրաններից:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ...

*Սկիզբը՝ էջ 4*

Քրիստոնյա Ռուսական կայսրությունը եւս, մյուս գերտերությունների նման, Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի հետ իր սիրախաղերով, հայոց Մեծ եղեռնը չկանխելու պիղատոսական



գործունեությամբ դարձավ նրա մեղսակիցը: Ավելի ճակատագրական դեր խաղաց Խորհրդային Ռուսաստանը, որն իր թուրք դաշնակցին տրամադրած ռազմական ու նյութական մեծ օգնությամբ նպաստեց, որ Թուրքիան արեւմտահայերի վերջնական բնաջնջումով ավարտին հասցնի Եղեռնի պետական ծրագիրը: Եվ դրանով չբավարարվելով՝ նաեւ հայ բոլշեւիկների ձեռքով խարխլեց Հայաստանի Հանրապետությունը: Իսկ բոլշեւիկների գործունեության ուղղակի պատկերումը նրանց գերիշխանության պայմաններում, մեղմ ասած, նպատակահարմար չէր: Ահա ինչու Լ. Շանթը նախընտրեց «բյուզանդական դարերում» Կիլիկյան հայկական թագավորության կործանման պատճառների գեղարվեստական բացահայտումը՝ ընդհանրություններ նկատելով ու մատնացույց անելով Հայաստանի Առաջին Հանրապետության ողբերգական անկման եւ կիլիկյան դարերի իրադարձությունների միջեւ:

Թե՛ «Ինկած բերդի իշխանուհին», թե՛ մանավանդ «Օշին պայլը» իրենց ժանրային նկարագրով դասական ողբերգություններ են: Հեղինակն իր բոլոր դրամատիկական գործերն է հայեցի բնորոշ անվանումով թատերակ կոչել, սակայն գրականագետները դրանք առանց տարբերակման դրամա են անվանել, եւ այս ավանդույթը, ցավոք, շարունակվում է: Մինչդեռ այս երկու գործերն էլ իրենց ողբերգական ավարտով դրամա չեն ողբերգության եւ կատակերգության միջին տիրույթում գտնվելու եւ հերոսների ներքին լարված ապրումների պատկերման իմաստով: Ինչպես ստորեւ կտեսնենք, անձնականը հասարակական պարտքին, հայոց պետականության շահերին բարձր գիտակցությամբ զոհաբերող շանթյան հերոսները, ճիշտ է, ունենում են դրամատիկ լարումներ ու ներքին պատերազմներ, սակայն նրանք ավելի զորեղ ողբերգականի զգացում են առաջացնում եւ ստեղծված են հենց դասական ողբերգության կանոններով:

«Ինկած բերդի իշխանուհին» ողբերգությունը Լ. Շանթը գրեց 1921 թ.՝ դեռ Եղեռնը չավարտված եւ նրա հետեւանքով Հայաստանի Առաջին Հանրապետության կործանման անմիջական տպավորությամբ: Ժամանակին Երվանդ Օտյանը մի հետաքրքիր բացատրություն է տվել Եղեռնի մասին. «Իր սկզբնավորության մեջ չէիք գիտակցեր աղետին ահռելի մեծությունը»: Այդպես էլ բուն Եղեռնի օրերին գեներալ Չեռնոզուբովի հրամանատարությամբ կամավորական 7-րդ բանակի կազմում ազնիվ մղումներով ռազմադաշտ մեկնած եւ որոշակի նպատակային ուղերթով Արեւմտահայաստան մեկնած Եղիշե Չարենցը չի գիտակցել, որ դա իրական Եղեռն է, եւ հետագայում «Ողջակիզվող կրակ» բանաստեղծական շարքում, 1921-24 թթ. գրած «Երկիր Նաիրի» պոեմանաման վեպում, 1929-ին «Խմբապետ Շավարշը» եւ 1933-ին գրած «Մահվան տեսիլ», 1934-37 թթ. գրած «Երկու սոնետ» պոեմներում ու այլ գործերում է տվել ողբերգության իր գնահատականը: Այնպես որ, ընդամենը մի քանի ամսվա կարճ ժամանակամիջոցը գուցե հնարավորություն չէր տվել Լ. Շանթին՝ կատարված ողբերգությունը լիովին գիտակցելու: Թերեւս այդ պատճառով էլ ութ տարի հետո, երբ արդեն պարզվել էին եղերական իրադարձությունների մանրամասներն ու տխուր հետեւանքները, Արցախն ու Նախիջեւանը նույնպես կտրվել Հայաստանից ու տրվել էին Ադրբեջանին, եւ հստակվել էր ամեն ինչ, Լ. Շանթը վերստին անդրադարձավ նույն կիլիկյան դարերին, ավելի ստույգ՝ Կիլիկիայի հայոց թագավորության մայրամուտին, եւ «Օշին պայլ» ողբերգության մեջ առավել խորությամբ բացահայտեց հայոց պետականության կործանման թե՛ արտաքին, թե՛ ներքին դրդապատճառները՝ ակնհայտ նմանություններ տեսնելով եւ զուգահեռելով Հայաստանի Առաջին Հանրապետության ողբերգական անկման հետ:

*Շարունակելի*

*Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Մետրոպոլիտ Անտոնի ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ՄԵՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՀԱՐՈՒՅՑԱԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՆԴԻՊԵԼՆ Է

*Սկիզբը՝ թիվ 8, 10-11*

Աստծո Որդու ծնունդն ամենեւին նման չէ մեր ծնունդին: Նա, ինչպես մենք, անգոյությունից մուտք չգործեց ժամանակի մեջ: Նրա ծնունդը ծագած բոլոր կյանքերի սկիզբը չէր. այդ ծնունդը սահմանափակումն էր այն լրումի, որ Նա ուներ մինչ կսկզբնավորվեր աշխարհը: Նա բոլոր ժամանակներից առաջ արդեն իսկ ուներ Հոր հավիտենական փառքը եւ մուտք գործեց մեր՝ արարածների աշխարհը, ուր մարդը մեղքը, տառապանքը, մահն էր ներմուծել: Քրիստոսի ծնունդն Իր կյանքի սկիզբը չէր, այլ Իր մահվան սկիզբը: Նա ընդունեց այն ամենը, ինչը կազմում են մեր կյանքի պայմանները, եւ երկրի վրա Նրա կյանքի առաջին օրն էլ դարձավ խաչ տանող առաջին օրը:

Նրա մահվան մեջ մի բան կա, որ միմիայն Նրան է պատկանում: Մենք փրկվեցինք Քրիստոսի մահով ոչ նրա համար, որ այն չափազանց դաժան էր: Դարերի ընթացքում անթիվ-անհաշիվ են այն տղամարդիկ, կանայք ու երեխաները, որոնք ոչ պակաս տառապանքներ են տարել: Շատերն այրվել են կրակների մեջ, շատերը՝ ցրտահարվել, ոմանք մահացել են հիվանդության ծանր ցավերի մեջ, ոմանք էլ դիմացել են համակենտրոնացման ճամբարներում կրած տանջանքներին, տեսել պատերազմի սարսափները: Քրիստոսի մահը նրանով էր եզակի, որ Նազարեթցի Հիսուսը մահ չուներ, ուղղակի չէր կարող մահանալ: Ուստի Նրա ոչ թե հարությունը, այլ մահն էր անհավանական հրաշքը: Մենք Պողոս առաքյալի թղթերից եւ Եկեղեցու վարդապետությունից գիտենք, որ մահը մեղքի, Աստծո հետ հաղորդակցվելուց հեռանալու արդյունք է: Իսկ Քրիստոսը հենց մարմնացյալ Աստված էր. Նրա Աստվածությունն ու Նրա մարդեղությունն անբաժան էին միմյանցից, ուստի Նրա մարդեղությունը եւս մահվան տիրույթից դուրս էր: Աստծո մարմնացյալ Որդին հենց Իր մարմնով, հենց Իր մարդեղությամբ իսկ ենթակա չէր մահվան ու փտումին:

Եվ սակայն Նա մահանում է: Այստեղ են հենց նմանը չունեցող պարադոքսն ու ողբերգությունը: Ուղղափառ սրբերից մեկն ասում է, որ Քրիստոսի մարդեղության մեջ երկու իրողություն կա. մեկը, որ Նա մարդ է դառնում եւ բացահայտում, դրսեւորում այն ճշմարիտ մարդկությունը, որին կոչված ենք մենք, այն մարդկությունը, որի արմատները սերում են հենց Աստծուց եւ անբաժան են աստվածային կյանքից, եւ որը մահվան ենթակա չէ: Եվ որպեսզի դառնար մեզանից մեկը, ճշմարտապես հաղորդ դառնար մեր տառապանքներին եւ մերժված լինելուն, Քրիստոսն Իր վրա վերցրեց ողջ ծանրագույն բեռը մարդկության վիճակի, բոլոր սահմանափակումները, մարդկության՝ ըստ էության Նրան խորթ ցավն ու հոգնածությունը, քաղցն ու ծարավը, ի վերջո՝ բուն մահվան հնարավորությունը: Եվ երբ եկավ Նրա ժամը, Նա մահացավ խաչի վրա մեր մահով, սակայն ավելի սարսափելի մահով, քան մերն է: Մենք մահանում ենք, քանի որ ենթարկվում ենք մահացության, մեր մարմինը թարշամում ու թափվում է, եւ մենք այլեւս չենք կարող ապրել: Եթե մենք անցողիկ այս կյանքում հասցնենք ճանաչել Աստծուն՝ Նրա հետ ապրելով, ապա մեզ համար մահը ոչ թե պարտություն կլինի, այլ նոր, ավելիով ու լիությամբ տրված մի կյանք, ինչպես նշում է Պողոս առաքյալը, երբ գրում է, թե մահն իր համար նշանակում է ոչ թե կյանքի կորուստ, այլ հավիտենական կյանքի զգեստավորում: Եվ սակայն մահը մեզ համար միշտ էլ ողբերգություն է. մարմինն ու հոգին բաժանվում են իրարից, մարդկային ամբողջականությունը փլուզվում է, եւ մենք պետք է սպասենք մարմնի հարությանն ու հավիտենական կյանքի հաղթանակին, որպեսզի դառնանք ճշմարտապես եւ լիարժեքորեն այն, ինչին կոչված ենք լինելու:

Սակայն Քրիստոսի մահվան մեջ մի այլ բան է կատարվում: Նա մահանում է, չնայած որ մահանալ չի կարող, Նա մահանում է, չնայած Իր մարդկային ողջ էությամբ, որն անբաժան է աստվածայինից, անմահ է: Նրա հոգին, Աստծուց չբաժանվելով, պոկվում է Նրա մարմնից՝ թե՛ հոգով եւ թե՛ մարմնով Աստծո հետ միավորված մնալով: Նա երեք օր անփուտ մնում է գերեզմանում, որովհետեւ Նրա մարմնին չի կարող դիպչել փտումը: Այն ամբողջովին լցված էր աստվածային ներկայությամբ, համակված նրանով այնպես, ինչպես թուրը հնոցի կրակով: Քրիստոսի հոգին դժոխք է իջնում Իր Աստվածության փառքի շողերի մեջ: Նրա մահվամբ անմահ մարմինն անջատվում է անմահ հոգուց, մարմին, որ չէր կարող մեռնել, հոգի, որը կենդանի է եւ ընդմիշտ մնում է կենդանի: Սա էլ դարձնում է Քրիստոսի մահը ողբերգական. այն աներեւակայելի կերպով գերազանցում է մեր պատկերացումները՝ ուզածդ տառապանքի համեմատությամբ, որ մենք կարող ենք պատկերացնել կամ ապրել մարդկայնորեն: Քրիստոսի մահը մեծագույն սիրո արար էր: Նա հենց ճշմարտությունն էր հաղորդում, երբ ասում էր, թե ոչ ոք չի կարող Ինձանից վերցնել կյանքը. Ես Ինքս եմ այն տալիս: Ոչ ոք չի կարող Նրան՝ Անմահին սպանել, ոչ ոք չի կարող մարել այդ Լույսը, որն Աստծո փառքի փայլատակումն է: Նա զոհաբերեց Իր կյանքը, ընդունեց անհնարին մահը, որպեսզի կիսի մեզ հետ մեր մարդկային վիճակի ողջ ողբերգությունը:



Առաջին՝ ամենածանր ու ամենասարսափելի Խաչը Տերն Ինքը վերցրեց Իր ուսերին, Նրանից հետո հազարավոր տղամարդիկ, կանայք, երեխաներ իրենց վրա վերցրին սեփական խաչերը, որոնք ավելի թեթեւ էին: Եվ որքան հաճախ է այդ խաչը, որն անհամեմատ թեթեւ է, քան Քրիստոսինը, մեզ ներկայանում անտանելի: Բազում մարդիկ սիրով ու հնազանդությամբ անցան Քրիստոսի ճանապարհով, երկար ու ողբերգական այն ճանապարհով, որ ցուցանեց մեզ Տերը: Այո՛, ճանապարհը ողբերգական է, բայց այն երկրից տանում է մեզ դեպի Աստծո գահը, Աստծո արքայությունը: Ահա 2000 տարի է գնում են մարդիկ՝ տանելով իրենց խաչերը, մարդիկ, որոնք հավատում են Քրիստոսին: Նրանք գնում են Նրա հետքերով՝ բազմություն առ բազմություն, եւ ճանապարհին երեւում են անթիվ խաչեր, որոնց վրա խաչված են Քրիստոսի աշակերտները: Խաչը խաչի հետեւից... ուր նայում ես, խաչեր են: Մենք տեսնում ենք մարմնական տանջանքների ենթարկված նահատակների, տեսնում ենք ճգնավորների, հոգու հերոսների, տեսնում ենք վանականների՝ կին թե տղամարդ, հոգեւորականների եւ հովիվների, բայց ավելի շատ պարզ, սովորական, աննշան մարդկանց՝ Աստծո ժողովրդին, որոնք ինքնակամ իրենց վրա էին վերցրել Քրիստոսի խաչը: Այդ երթը վերջ չունի: Նրանք գնում են դարեր շարունակ՝ իմանալով, որ Քրիստոսը զգուշացրել է, թե երկրի վրա իրենք պիտի վշտահար լինեն, սակայն Աստծո արքայությունն իրենցն է լինելու: Նրանք գնում են ծանր խաչերով՝ լքված, հանուն ճշմարտության, հանուն Քրիստոսի անվան՝ հալածված ու անարգված: Նրանք՝ տարեցներ ու երիտասարդներ, մեծեր ու մանուկներ, գնում ու գնում են՝ որպես Աստծո անարատ զոհեր: Իսկ ո՞ւր ենք մենք: Մի՞թե մենք պատրաստվում ենք կանգնել ու նայել, թե ինչպես են մեր կողքով անցնում այդ վերջ չունեցող շարքերը, մարդկանց այդ խմբերը՝ պայծառ հայացքներով, չխամրող հույսերով, անսասան սիրով, սրտերում անասելի ուրախություն: Մի՞թե մենք չպիտի միանանք այդ հավերժական երթին, այդ բազմությանը, որի վրա զոհի ու նաեւ Աստծո որդու կնիքը կա: Մի՞թե մենք չպիտի վերցնենք մեր խաչն ու հետեւենք Քրիստոսին: Քրիստոսը պատվիրեց մեզ հետեւել Իրեն: Նա մեզ հրավիրեց Աստծո արքայության մեջ մասնակցելու այն խնջույքին, որը գլխավորում է հենց Ինքը: Ավելի ճիշտ՝ Նա կողքին է յուրաքանչյուրի, ով գնում է այդ ճանապարհով: Կամ գուցե դա մեզ որպես մղձավա՞նջ է ներկայանում: Ինչպե՞ս կարող են մարմինն ու արյունը տանել այդ ողբերգությունը, հին ու նոր ժամանակների նահատակության սարսափելի տեսարանները: Դա հնարավոր է, քանզի Քրիստոսը հարություն առավ, քանզի Աստծո մեջ, Ով մեր երթի առջեւից է գնում, տեսնում ենք գալիլիացի անհաղթ այն Մարգարեին, ինչպիսին տեսնում էին Նրան Իր չարչարողներն ու հետապնդողները:

Մենք ճանաչեցինք Նրան Իր Հարության փառքով: Մենք գիտենք, որ Նրա ամեն մի խոսքը ճշմարտություն է: Մենք գիտենք, որ Աստծո արքայությունը մեզ է պատկանում, եթե միայն մենք հետեւենք Նրան:

*Թարգմանությունը՝ Ռ. ԱՐՈՅԱՆԻ*

# ՄԵՂՔԻ ՎԱՐՁԸ



*Ն. Ռերիխ. «Կախարդներ»*

*Սկիզբը՝ էջ 5*

Կախարդներին դիմողների շարքերում կան մարդիկ, ովքեր թալանվել են, կամ նրանցից գողություն է կատարվել: Ինչ-ինչ պատճառներով օրինապահներին դիմելուց խուսափելով՝ գերադասում են կատարվածի մասին դիմել գուշակի եւ արդյունքում, շնորհիվ այդ կախարդի, «պարզում», որ հանցագործությունը կատարել է մերձավորներից մեկը: Հիմա պատկերացրեք այն խեղճ բարեկամին, ով իսկապես անմեղ է, սակայն պետք է կարողանա ապացուցել իր ազնվությունն ու չարված գողությունը: Պարզ է արդեն, թե ինչ է լինելու սրա հետեւանքը. անախորժություններ ընտանիքներում, վեճեր, գժտություններ. սրանք՝ լավագույն դեպքում:

Միակ շահողը կախարդն է՝ շորթած իր գումարներով:

Հայտնի բան է, որ դեւերը գործում են կախարդների օգնությամբ. անմարմին լինելով՝ վերջիններիս միջոցով մարմին են փնտրում՝ բնակվելու համար: Դրանք հիմնականում փորձում են ծածուկ պահել իրենց էությունը, վստահեցնել, որ ամենեւին էլ դեւեր չկան, եւ մարդն է իր երեւակայությամբ ստեղծում դրանք: Իրականում կախարդները դիմում են հենց այդ դիվային ուժերին, նրանցից ստանում զորություն՝ ոմանք գիտակցաբար, ոմանք էլ՝ անգիտությամբ: Վստահաբար շատերը, ովքեր դիմել են կախարդներին, լսած կլինեն, թե ինչպես են նրանք փաստում, որ իրենց զորությունը ստացված է. «ինչ-որ մեկն ինձ ասաց», «ինչ-որ ուժ կառավարում է ձեռքերս», «մեկն ինձ թելադրում է, իսկ ես կատարում եմ նրա ասածները»: Ցավոք, ճշմարիտ հավատքից հեռու կանգնած մարդկանց թվում է, որ այդ զորություններն Աստծուց են: Սակայն Աստվածաշունչը եւս զգուշացնում է մեզ, որ սատանան էլ է կերպարանավորվում որպես լուսո հրեշտակ՝ կեղծելով իր իրական դեմքը:

Ուստի հարկ է զգուշանալ այս կարգի «պայծառատեսներից»: Մի՛ խաբվեք, անգամ եթե ապագային վերաբերող հատուկենտ ճշմարտություններ լսեք: Մի՛ խաբվեք կախարդի սենյակում սրբանկարների ներկայությունից. դրանք արտաքին փոնը պահելու համար են միայն: Գիտակցե՛ք, որ ճշմարիտ բժշկողը նախ անբիծ հոգեւոր արժեքների կրող պետք է լինի, սրտեր քննող եւ այնտեղ քողարկված մեղքը տեսնող, այլ ոչ թե սրբանկարի կողքին «խաղաթուղթ բացող»: Իսկ եթե երբեւէ դիմել եք նրանց «օգնությանը», ապա հարկ է, որ ապաշխարեք, ինչպես մեզ սովորեցրեց Միածին Փրկիչը, Ով մեր փրկության համար Իր անձը զոհաբերեց: Ձեր կատարած մեծ կամ փոքր մեղքի համար Աստծո՛ւց ներում խնդրեք եւ մոտեցող կիրակի՝ սուրբ պատարագի ընթացքում, հաղորդվեք Քրիստոսի Մարմնին ու Արյանը՝ աստվածային զորությունը միախառնելով ձեր անձերին: Ու վստահ եղեք, որ Ս. Հաղորդությունն ընդունելով՝ այլեւս զերծ կմնաք դիվային ուժերի հարձակումներից: Ու ամենից կարեւորը՝ ձեր հոգիները կզգան իրական բժշկումը եւ խաղաղությունը, քանզի յուրաքանչյուր հոգի իր ծարավն ու քաղցն ունի այն ամենի հանդեպ, ինչն Աստծուց է: Մերձենալով Աստծուն՝ մենք այլեւս կարող ենք տարբերել չարը բարուց եւ վստահ լինել, որ մեր հետագա կյանքն Աստծո հետ է եւ ոչ թե ընդդեմ Նրա:

*Սմբատ արկ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ*

**Կարգալույծ է հռչակվել Վարդան քհն. Վարդանյանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ՝ կարգազանց ընթացքի համար կարգալույծ է հռչակվել Վարդան քհն. Վարդանյանը:

Նա այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Արամ Վարդանյան:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
2. 07. 2009 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**